II	Саркисашен-Цакури	Кальцит	16	н	$\frac{0.008-0.05}{0.032(0.018)}$	н	0.0015	4.8
	Саркисашен	Известняк	28	н	$\frac{0.008-0.03}{0.017(0.007)}$	н	$\frac{0.0015-0.04}{0.011(0.01)}$	18.7
	Цакури	Известняк	25	н	$\frac{0.004-0.03}{0.016(0.01)}$	н	$\frac{0.0015-0.01}{0.005(0.2)}$	80

Примечание: н - нормальный, л. - н. - логарифмически-нормальный законы распределения;

R_j - размах колебания содержаний;

$\bar{X}$ - среднее арифметическое, $\tilde{X}$ - среднее геометрическое содержание;

S - среднее квадратическое отклонение (для нормального закона);

ε - стандартный множитель (для лог-нормального закона).

Еще более разнятся на диаграмме поля вмещающих минерализацию кальцита пород обоих генетических типов. I тип также характеризуется более высокими содержаниями Ba и Ba×Sr (табл.1.).

Отмечается четкий тренд уменьшения интенсивности ореолов BaхSr по направлению от многокамерных жеод, "гнезд" (Мюришен), жил и жильных зон (Мюришен, Саркисашен-Цакури), гидротермальнокарстовых полостей (Саркисашен-Цакури) (рис. 2, 3).

Так, в известняках вблизи жил и жильных узлов возрастание Sr и Ba связано, по всей вероятности, с появлением новых генераций кальцитов при перекристаллизации известняков в зонах структур макро- и мезобудинажа, контролирующих жилы и жильные узлы [9]. Именно с разной степенью перекристаллизации известняков связано, по-видимому, формирование зональных ореолов Sr×Ba [9].



Рис. 2. Схема зонального ореола Sr х Ba в трахибазальтах на контакте с тектоническим погреевом (Мюришенская группа проявлений): 1. – трахибазальты; 2 – измененные трахибазальты; 3-карбонатная порода гидротермального происхождения; 4 - зональная оторочка погреева; 5 - скаленоэдры кальцита; 6-7 - части ореола: 6 - тыловая; 7 - фронтальная.




Рис. 3. Схема зонального ореола $Sr \times Ba$ в титонских известняках на контакте с шпатоносным погребом (Саркисашен - Пакурская группа проявлений): 1 - известняки; 2 - измененные известняки; 3 - зональная оторочка погребя; 4 - консервирующая глина; 5 - кристаллы кальцита; 6-7-части ореола; 6-тыловая; 7-фронтальная.

Корреляционный анализ выявил в кальцитах I генетического типа сильную положительную связь у группы Cu, Ti, Mg, V , а также у Y с Zr (табл.2); в то же время у кальцитов II генетического типа связь между всеми изученными элементами отсутствует (табл. 3). Кластерный анализ позволил установить следующие ассоциации элементов в кальцитах обеих групп (рис. 4):

Мюришен: 1. Cu, Ti, Mg, V, Mn, Ba

2. Y, Zr

3. Ag, Sr, Ca

Саркисашен-Пакури: 1. Cu, Cr, Y

2. Mn, Sr

3. Zr, P, Ti

Подчеркнуты элементы, имеющие высокую групповую корреляционную связь при уровне значимости 0,05 (доверительная вероятность 99,95%).

Таким образом, приведенные данные показывают, что геохимическое опробование (в комплексе с другими методами) весьма эффективно при поисках и разведке месторождений исландского шпата, устанавливая, в том числе, наличие "слепых" минерализованных тел (гнезд, погребов, жил, жильных узлов и т. д.).

Необходимо отметить, что кальцитометрические методы поисков не ограничиваются только геохимическими особенностями кальцитов. Потен-

циальный комплекс этих методов основан в том числе и на типоморфных свойствах минерала-информатора (или минерала-индикатора)-кальцита: микротвердость, цвет, люминесценция, состав твердых включений и т.д.

Матрица коэффициентов корреляции химических элементов
в кальцитах Мюрищенской (тавл. 2) и Саржисапен-Цакурской (тавл. 3) групп проявлений

Таблица 2

	Mg	Ca	Mn	Ti	V	Zr	Cu	Ag	Y	Sr	Ba
Mg	1	-0.300	0.350	0.808	0.587	0.500	0.804	-0.216	0.375	-0.429	0.225
Ca		1	0.037	-0.300	-0.304	-0.300	-0.296	0.225	-0.150	0.300	0.112
Mn			1	0.575	0.567	-0.221	0.371	0.050	-0.183	0.112	0.112
Ti				1	0.692	0.367	0.821	-0.175	0.217	-0.179	0.300
V					1	0.246	0.475	-0.612	0.167	-0.462	-0.079
Zr						1	0.537	-0.358	0.750	-0.533	0.037
Cu							1	0.042	0.417	-0.271	0.229
Ag								1	-0.282	0.525	0.150
Y									1	-0.412	0.112
Sr										1	0.187
Ba											1

$r_{\text{ср}} = 0.693$

Таблица 3

	Mn	Ti	Cr	Zr	Cu	Y	Sr	P
Mn	1	0.085	-0.714	0.600	-0.214	-0.257	0.857	0.600
Ti		1	-0.314	0.429	-0.171	-0.429	0.257	0.429
Cr			1	-0.771	0.857	0.229	-0.857	-0.771
Zr				1	-0.771	-0.429	0.771	0.771
Cu					1	0.200	-0.786	-0.771
Y						1	-0.314	-0.429
Sr							1	0.771
P								1

$r_{\text{ср}} = 0.877$

Применение его в силу экспрессности и экономичности может оказаться весьма эффективным на перспективных площадях Мартунинского синклинария.

Работа выполнена в рамках тем 96-116 и 96-125, финансируемых из госбюджета Республики Армения.




Рис. 4. Дендрограмма результатов кластерного анализа элементов в кальцитах Мюришенской (а) и Саркисашен-Цакурской (б) групп проявлений исландского шлата.

Институт геологических наук НАН РА, Ереван
Арцахский Гос. университет

1. Григорян С. В., Ляхович Т. Т., Гетманский И. И. Оценка геохимической аномалии по элементам-примесям в минералах. - Международный симпозиум по прикладной геохимии стран СНГ. М.: 1997, с. 84-85.
2. Браунлоу А. Х. Геохимия. М.: Недра, 1984, 463 с.
3. Бурнов В. В., Подиоряна Е. К. Стронций. - Тр. ИМГРЭ, М.: 1962, вып. 12.
4. Воровьев Е. И. Стронций и барий в гипергенных образованиях, М.: Наука, 1973.
5. Oosterom M. G. Strontium and barium in carbonates of crystalline rocks. Proc. koninkl. nederl. Acad. wet., 1966, vol. 69, N 5.
6. Воровьев Е. И., Костюкова Е. С., Пожарицкая Л. К. Использование коэффициентов распределения бария между парагенными минералами для сравнительной геологической термометрии и барометрии. - Ежегодник СибГЕОХИ 1970 г., Иркутск: 1971.
7. Воровьев Е. И., Резвицкий Л. З., Онготоев А. Р. Использование данных керновых пров при геохимическом опробовании. Изв. ВУЗов. Геология и разведка, 1977, N8, с. 62-68.
8. Мандалаян Р. А., Хачапов Х. В., Саркисян Р. Ю. Генетические типы исландского шпата НКР. - Ученые записки АРГУ, 1998, N 1, с. 53-58.
9. Резвицкий Л. З., Матонин В. Н., Онготоев А. Р. Статистические закономерности распределения и геолого-структурные условия локализации флюопита на слюдяных месторождениях. - Матер. конф. молодых научн. сотр. ВостСибНИИГГИМС, Иркутск, 1972.

Խ. Վ. ԽԱՉԱՆՈՎ, Ռ. Ա. ՄԱՆԴԱԼՅԱՆ, Ռ. ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՂՀ – ՍՓԱԹԱԲԵՐ ԴԱՇՏԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԱԼՑԻՏՈՒՄԵՐԱԿԱՆ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՊՄԱՆ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա մ փ ո փ ու մ

Աշխատանքում ներկայացված է կալցիտոմետրիական մեթոդների կիրառման բարձր արդյունավետությունը Մարտունու սինկլինորիումի սփաթաբեր հեռանկարային տարածքներում իսլանդական սփաթի հանքավայրերի որոնողական աշխատանքներում, հիմնված կալցիտի երկրաքիմիական հատկությունների վրա:

Զննարկվում է իսլանդական սփաթի երկու տարբեր տիպի ծագումաբանական բնույթի երևակումների, Մյուրիշենի ցեոլիտ-կալցիտային և Սարգսաշենի մոնոկալցիտային տիպի հանքայնացման, կալցիտներից և ներփակող ապարներից Ca-ի տիպոմորֆ Sr և Ba էլեմենտների վառքագիծը:

Նշվում է Ba x Sr մուլտիպլիկատիվ գոտու հստակ արտահայտված ինտենսիվության նվազեցումը հանքայնացված մարմիններից դուրս ուղղությամբ:

Երկրաքիմիական որոնումների այս մեթոդի կիրառումը, շնորհիվ իր արագության և խնայողության, կարող է շատ արդյունավետ լինել հանքայնացված հատվածների և այդ թվում «կույր» մարմինների որոնման գործընթացում:

ABOUT THE POSSIBILITIES OF USING CALCIT METRIC METHODS
OF SEARCHES IN SPAT CONTAINING FIELDS OF NKR

Summary

High efficiency has been shown in the works of using calcit metric methods based on geochemical qualities of calcits for searches the deposits of islandic spat in the perspective areas of Martuny's sinclinary Virayots (Somkheto) Karabakhs structural - formational zone of Small Caucasus.

УДК 511.2.574

Ա շ խ ա ր հ ա գ ր ու թ յ ու ն

ԳԱԳԻՆՅԱՆ Ռ. Խ., ԱՐԱՔԵԼՅԱՆ ՅՈՒ. Ա., ԳԵՎՈՐԳՅԱՆ Ֆ. Ս.

ԱՐՑԱՍԻ ԲՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնական հուշարձանների հաշվառման, հետազոտման և գնահատման աշխատանքներն ունեն գիտաճանաչողական, պատմահնետաբանական, հայրենագիտական, ինչպես նաև գործնական կարևոր նշանակություն: Ռելիեֆի բազմազան ձևերը, երկրաբանական ինքնատիպ մերկացումները, կարստային քարանձավները, ջրվեժները, անհետացման շենին գտնվող մի շարք բույսերի ու կենդանիների տեսակներ կարող են գիտական նստաշրջանների ու ուսանողական պրակտիկաների օբյեկտներ լինել, ինչպես նաև նպաստել զբոսաշրջությանը զարգացմանը:

Արցախի տարածքի բնական լանդշաֆտների զարգացման պատմությունը, ռելիեֆի երկրաբանական բարդ կառուցվածքը, մակերևույթի խիստ մասնատվածությունը, նրա ապարաշերտագրական խայտաբղետությունը օբյեկտիվ պայմաններ են ստեղծել բնական բազմազան հուշարձանների առաջացման համար: Արցախը իրավամբ կարելի է համարել բնական հուշարձանների բազմաբնույթ հուշարձան:

Բնական հուշարձանները կարելի է խմբավորել. ա) անկենդան, բ) կենսածին տիպերի: Բնական անկենդան հուշարձանների մեջ են մտնում երկրաբանագեոմորֆոլոգիական, ջրաբանական, իսկ կենսածինի մեջ՝ ֆաունայի և ֆլորայի եզակի ներկայացուցիչները, համալիրային լանդշաֆտային հուշարձանները: Որպես կանոն երկրաբանական հուշարձանները համապատասխանում են ռելիեֆի որոշակի տարրերի հետ: Այդ պատճառով էլ տրամաբանական է բնության անկենդան հուշարձանների այս երկու ենթատիպերը դիտել որպես մի ամբողջություն՝ հուշարձանների բնապահպանման երկրաբանագեոմորֆոլոգիական համակարգ: Նման հուշարձաններ են հանդիսանում անկենդան բնության այնպիսի օբյեկտներ, որոնք լիովին բացահայտում են տըվյալ տեղամասի լեռնային համակարգի երկրաբանական կառուցվածքը և զարգացման պատմությունը: Դրանց թվին են պատկանում երկրաբանական բնորոշ մերկացումները, ռելիեֆի ձևերն ու տիպերը, բրածո բույսերի և կենդանիների մնացուկներ պարունակող ապարաշերտերը, շինանյութերի (կրաքար, տրավերտին, բազալտ և այլն), ուշագրավ միներալների (ազատ, կվարց, իսլանդական շպատ և այլն) հանքավայրերի առանձին տեղամասերը: Այս հուշարձաններին են դասվում նաև գեոդինամիկ պրոցեսների հետևանքով առաջացած երկրաբանական գեոմորֆոլոգիական գոյացումները (սեյսմոֆիլվածքներ, սելավային արտաբերման կոներ, հողմահարման և կարստային ձևեր և այլն):

Արցախի տարածքը մտնում է Առաջավոր Ասիայի ալպյան երիտասարդ լեռնագոյացման գոտու մեջ և ունի բարդ երկրաբանական կառուցվածք. հետևաբար խիստ մասնատված ռելիեֆ: Այստեղ հանդիպում են յուրայից մինչև հոլոցենի հասակի ապարներ, որոնք տարածված են տարբեր տեկտոնական զոնաներում և ենթարկվել են եռանդուն ծալքավորման: Ապարաշերտերը

տեկտոնական խախտման գծերով բեկորազատվել են: Երկրակեղևի տեկտոնական տեղաշարժերի, հրաբխականության, հողմնահարման, էրոզիայի և տեղատարման հետևանքով ստեղծվել են «բնական կոթողներ»: Ինչպես Ձրվարթուցը և Գանձասարը չունեն իրենց կրկնօրինակները, այնպես էլ երկրաբանագետօրոֆոլոգիական շատ հուշարձաններ բացառիկ են՝ իրանց մեջ ծածկագրված գիտական մեծ նշանակություն ունեցող ինֆորմացիայով և դրանք պետք է պահպանվեն գալիք սերունդների համար:

Երկրաբանագետօրոֆոլոգիական հուշարձանների շարքին են դասվում գեղատեսիլ կիրճերն ու հովիտները, երկրաբանական ուշագրավ մերկացումները, ժայռային անձեռակերտ «քանդակները», կարստային քարանձավները և այլն:

Հետաքրքիր ու գեղեցիկ են Արցախի կիրճերն ու հովիտները, որոնք աչքի են ընկնում իրենց կուսական տեսքով: Այդպիսիք են Կարկառի (Հունուտի), Թարթառի, Վարանդայի և այլ գետահովիտների կիրճերն ու կանիոնները: Առանձնապես ուշագրավ է Հունուտի կիրճը, որը 5 կմ երկարությամբ ձգվում է Քարինտակից մինչև Շոշ բնակավայրը: Շուշի քաղաքի մոտ գետը կտրել է Շուշիի մոնոկլինալ կառույցը և առաջացրել 200 մ խորությամբ կանիոն: Դժվարամատչելիության պատճառով այն համարյա պահպանվել է կուսական վիճակով: Տեկտոնական եռանդուն բարձրացման հետևանքով Թարթառ գետի Գետավան-Սատաղիս հատվածի առանձին տեղամասերում և նրա վտակ Թրդիի հովիտում առաջացել են անդնդախոր կիրճեր, սահանքներ և ջրվեժներ, որոնք համարվում են Արցախի ամենահիշարժան բնության հուշարձանները: Հատկապես Թրդիի հովիտը ունի գեղատեսիլ, զարմանահրաշ և անկրկնելի բնություն:

Բնական հուշարձաններից են նաև լեռնաշղթաների ուշագրավ մերկացումները (Առավի, Ղարաբաղի, Կուսանաց և այլն): Լեռների բարձրադիր մասերում շատ են ռելիեֆի ծանրահակ ձևերը՝ փլվածքներ, քարաթափվածքներ, սողանքներ: Ժայռային մերկացումներ կան նաև Մեծ և Փոքր Քիրս, Դիզափայտ, Բովուրխան և այլ գագաթների վրա:

Արցախի լեռների միջին բարձրությունները ծածկված են անտառներով, որոնցից վեր խոյացող առանձին լեռկ գագաթները առաջացնում են ինքնատիպ ժայռեր, քարափներ, սեղանաձև գագաթներ: Որոշ վայրերում բարեհաջող զուգորդվում են երկրաբանագետօրոֆոլոգիական և ճարտարապետական հետաքրքրություն ներկայացնող հուշարձանները (Կաչաղակաբերդ, Ջրաբերդ, Հավթախաղաց, Կուսաբերդ, Բերդաբար և այլն): Խաչենի վերնագավառում, Կուսանաց անտառապատ լեռնաբազուկի վրա, 60 մ հարաբերական բարձրությամբ վեր է խոյանում Կաչաղակաբերդը: Այն կրաքարերից կազմված մի սեղանաձև բարձունք է, որի վրա կառուցված է ամրոցը:

Թարթառի և Թրդիի միախառնման վայրում է գտնվում Ջրաբերդի բարձունքը: Այն 80 մ հարաբերական բարձրությամբ զբաղեցնում է ինտրուզիա է, ուղղորդ լանջերով: Հարավից, արևմուտքից և արևելքից Ջրաբերդը ողողվում է Թարթառ և Թրդի գետերով: Բնության այս անմատույց գոյացությունը Հասան-Ջալալյանների համար ծառայել է ամրոցի ստեղծման հարմար վայր: Թարթառի աջ ափին, որտեղից սկսվում են Ղարաբաղի լեռները, խիտ անտառի մեջ ցցված է մի կրաքարային սեղանաձև հրաշագեղ ժայռ, որի վրա խաչենի տները կառուցել են Լևոնաբերդը (Հավթախաղաց): Հողմնահարման հետևանքով առանձին ժայռեր վերածվել են բնության զարմանահրաշ պատկերների՝ անձեռակերտ կոթողների:

Հարսնաքարը բնության անկրկնելի կերտվածք է՝ նրբագեղ աղջկա դիմաքանդակով: Այն գտնվում է Քոլատակ գյուղի մոտ ուղղորդ լանջերով ժայռի վրա: Արևը, ամրիկը և քամին դարերի ընթացքում կերտել են այն և ժայռի կետտորոնական մասին տվել կանացի տեսք:

Պեն Շենը հսնծրիստանի մոտ գտնվող մի մարդածև ժայռ է, որի գլուխը պսակված է կաթսայածև ժայռաբեկորով:

Դահրավի մոտ գտնվում է «Մարդ քարը» 7 մ բարձրությամբ մի ուշազրոավ մարդակերպ ժայռազանգված:

Ճարտար գյուղի մոտ ընկած տարածքում վեր է խոյանում հսկա գավազանի տեսքով դացիտային նեկկ:

Արցախում նեզոգոյի կարբոնատային հզոր ապարաշերտերի մեջ գոյացել են զանազան ձևի ու մեծության կարստային վիհեր, այրեր, քարանձավներ: Հոսող ջրերը դարերի ընթացքում ոչ միայն ստեղծել են տարբեր չափի ու ձևի քարայրներ, խռոչներ ու անցուղիներ, այլև թվում է թե հոգ են տարել, որ նրանք լինեն հեքիաթային, գեղեցիկ, ինքնատիպ՝ հարուստ ստալակտիտներով, ստալագմիտներով, ստալագմատներով, քարե մարգարիտներով և այլ ձևերով: Արցախի քարայրները իրենց գեղեցկությամբ և կարստային ձևերի առատությամբ ոչնչով չեն զիջում համաշխարհային հռչակ ունեցող քարանձավներին: Սակայն հարկ է նշել, որ Արցախի քարանձավները վատ են ուսումնասիրված. նորանոր այրերի, դահլիճների հայտնագործումը դեռ առջեվում է:

Այստեղի քարայրները կարելի է ստորաբաժանել 2 խմբի՝ դժվարամատչելի և մատչելի: Դժվարամատչելի քարանձավները թշնամիների հարձակման ժամանակ արցախցիներին ծառայել են որպես ապահով ապաստարաններ, ջուղորկված թաքստոցներ: Մ. Բարխուդարյանը (2) հաղորդում է, որ Հավթադաղացի մոտ գտնվող ուղղաձիգ ժայռի միջին մասում կար մի հսկայական քարայր՝ Լաչին Դայան, որի մուտքը քարապատված էր և թշնամու հարձակման ժամանակ այստեղ էին պատսպարվում տեղացիները:

Մեծ թիվ են կազմում անմատչելի քարանձավները Հունոտի կիրճում (Սվան, Հարյուրապետի, Ալեքսանա Դուզուն, Յեղունիկի Կարա, Հունոտի Կարա, Սմարաթներ և այլն):

Առանձին քարայրներ սկսվում են վիհերով և խորքում առաջացնում ստորգետնյա սրահներ անցուղիներ (Դադուն Կիոլ, Շիկաքար և այլն): Մի շարք քարայրներում տարին բոլոր սառույցը չի հալչում (Սառնատուն, Արնավի օջախ), որոշ քարանձավներ ունեն մի քանի կմ երկարություն (Զարդաշենի, Ջորիի, Շմանեկի և այլն):

Արցախի մատչելի և խոշոր քարանձավները կացարան են ծառայել քարե դարի մարդու համար: Այդ մասին են վկայում Հաղորդի շրջանի քարայրներից հայտնաբերված պալեոլիթի զենքերը, կուլտուրական շերտերը: Հայտնի են Թաղարի (Ծծախաչի) և Ազոխի քարայրները:

Թաղարի քարայրը գտնվում է Մեծ Թաղար գյուղից 1 կմ հարավ-արևելք՝ Իշխանագետի ափին, 850 մ բարձրության վրա:

Քարայրը բաղկացած է 10 կիսաշրջանածև կամարներից: Դրանցից 4-ը, որոնք կից են իրար, նայում են դեպի դուրս, իսկ մնացածները տեղադրված են ներսում: Քարայրի հասակը ծածկված է միջին պալեոլիթի վերջի և վերին պալեոլիթի սկզբի 16 կուլտուրական շերտերով (3): Այստեղից գտնվել են կենդանիների բազմաթիվ մնացորդներ, կայծքարից և օբսիդիանից պատրաստված զենքեր:

Ազոխի քարանձավը գտնվում է Ազոխ և Դրախտիկ գյուղերի միջև ընկած ձորակի լանջին, 1400 մ բարձրության վրա: Այն ունի լաբիրինթոսի նման 6 դահլիճներ, որոնցից ամենախոշորը 3 հազ. բառ. մ տարածքով: Այստեղ հայտնաբերվել են մուսոյերյան և աշելյան երկուական շերտեր (4): Աշելյան շերտերում հայտնաբերվել են 300 հազ տարվա վաղեմության զենքեր, քարե գործիքներ, ընդ որում 4 կիլոգրամանոց քարե կացին: Գտնվել են նաև բազում կենդանիների ոսկորներ: Արևելյան մուտքի մոտ հայտնաբերվել է նեանդերթալյան մարդու ներքին ծնոտի բեկոր: Ազոխյան նեանդերթալցին համաշխարհային նշանակություն ունեցող հայտնագործություն է, քանի որ այն հան-

դիսանում է պիտեկանտրոպից սինանտրոպ անցնող միջանկյալ օղակը: Մինչ այդ նման մնացորդներ հայտնաբերվել էին միայն աշխարհի չորս վայրերում: Քարանձավի երկարությունը ավելի քան 300 մ է: Առաջին դահլիճում գտնվում է մի հսկա ստալագմիտ, որը նման է երեսա գրկած կնոջ արձանի:

Արցախի ջրաբանական հուշարձանների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ոկլյուզային աղբյուրները, ջրվեժները և սահանքները: Ոկլյուզային աղբյուրներից են Շոր աղբյուրը (Շահ Բուլաղ) և Անալի աղբյուրը: Շոր աղբյուրը գտնվում է Տիգրանակերտի մոտ: Այն կրաքարային լեռնազանգվածի եզրամասից բխող ոկլյուզային աղբյուր է, որի ջրերը հիդրոստատիկ ճնշման տակ ուղղաձիգ կանալով մակերևույթ են դուրս գալիս բավականին հզոր ելքով:

Անալի աղբյուրը գտնվում է Հունոտի կիրճում, Շուշի քաղաքից ոչ հեռու: Սա քարանձավային գետակի ելքն է Կարկառի հունից 10 մ բարձրության վրա: Աղբյուրից փոքր ինչ ցած տրավերտինային գոյացությունները ստեղծել են վեհաքանչ «քարացած ջրվեժ», որի ներսում առաջացել է 40 քառ. մետր մակերեսով անձավ:

Արցախի ջրվեժները աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ և ինքնատիպությամբ: Հայտնի են Բաղարայի (12 մ բարձրությամբ), Ջրվշտիկի (6 մ), Պուլուր ծովի (4 մ), Սարգսաշենի, Շրլանի և այլ ջրվեժները:

Կենսաօին բնական հուշարձանների մեջ կարևոր նշանակություն ունեն բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչները: Որպես հուշարձաններ կարելի է նշել դարավոր և պաշտամունքի ծառերը: Դրանց մի մասը պահպանվել են մինչև մեր օրերը հին գյուղատեղերի մոտ, եկեղեցիների, մատուռների և խաչքարերի շուրջը: Դարավոր ծառերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նաև վերականգնել դրանց ապրած տարիների կլիմայական պայմանները:

Արցախի և ԱՊՀ տարածքի ամենահին և ամենաբարձր ծառը Սխտորաշեն գյուղի մոտ գտնվող 2010 տարեկան սոսին է: Այն ունի 44 քառ. մետր մակերեսով փչակ: Բնի շրջագիծը 27 մ է, բարձրությունը ավելի քան 54 մետր: Ծառի տակից բխում է Տնջրու հորդառատ աղբյուրը [3]: Սոսու այդպիսի դարավոր և պաշտամունքի ծառեր կան նաև Հաղուբուն (ծառի տարիքը անցնում է 800-ից, բնի շրջագիծը 23 մետր է), Բանազուր գյուղի մոտ (ծառի տարիքը անցնում է 500-ից, բնի շրջագիծը 7 մ), Հերիերում, Տող-Ֆիզուլի ծամբեզրում: Քերթի մոտ գտնվում էր մի հսկա սոսի, որը տապալվել էր կայծակի հարվածից: Փոշնու պաշտամունքի ծառեր կան Դահրավում, Քոսանիում, Մարդակերտում: Թղենու (թղարնի) պաշտամունքի ծառեր կան Գիշիի, ճարտարի, Մեծ Թաղարի, Տունիի շրջակայքում: Խանձածոր գյուղում է գտնվում դարավոր մի հսկա թեղի: Պաշտամունքի թեղիներ կան նաև Խաչմաչի, ճարտարի շրջակայքում, Ավետարանոց գյուղում: Ծամծոր գյուղի մոտ է գտնվում մի դարավոր կենի (Պարուն կենի):

Կաղնու ծառերի ավելի քան 30 պաշտամունքային վայրեր կան, որոնցից կարելի է նշել Ձորավորը՝ Հին Քյաթուկի, Մաղարախուրը՝ Կարմիր գյուղի, Խնձորե Խաչը՝ Սգնախի, Ջուխտ Պառավածառը՝ Թարավարդի, Կվախաչը՝ Վարդաշատի, Ջիրավորը՝ Բերդածորի մոտ [1]: Աշան, Նոր Շեն և Դզդալա գյուղերի միջև ընկած տարածքում աճում է մի կաղնի, որի արմատներից մեկը դուրս է ցցվել հողից և այնքան բարձրացել, որ նրա տակով կարելի է անցնել: Այն ծառայել է որպես բուժիչ վայր, հատկապես հագի դեմ: Այդ պատճառով էլ այն կոչվում է «ըխտըլ ծառ», այսինքն հազը բուժող ծառ [3]: Կուսապատ և Մոխրաթաղ գյուղերի միջև ընկած տարածքում է գտնվում Տավարախաչը: Անցյալում անասունների համաճարակի ժամանակ մոտակա գյուղերի հովիվները անասուններին քշում էին այդ սրբավայրը և 3 անգամ պտտեցնում «սուրբ կաղնու» շուրջը: Գյուլաթաղ գյուղում է գտնվում «Խրաշք ծառը»՝ դարավոր թեմու փչակից աճել է 6 մ բարձրության ընկուզենու ծառ:

Արցախի տարածքում կան նաև պաշտամունքի պուրակներ: Այդպիսիք են, հացենու՝ Կարմիր Շուկայի մոտ, Վարանդայի հովտում, Կաղնու՝ Ծառեխի (Ննգու մոտ), Սուրբ (Ղզալայի մոտ), Փոշնու՝ Կախանի (Հին Դրախտիկ), Թեղու՝ Կարմիր Եղջի (Տունի), Ջարգա-Մարագի (Սպիտակաշեն-Էմիջջան գյուղերի միջև), Խանցքի, լուռնու՝ Ավետարանոցի, Ազնեքի, Հոռաթաղի և այլ ծառախմբեր [1]:

Արցախի կենդանական աշխարհի եզակի տեսակներից են բեզուարյան այծը, այծյամը, ազնիվ եղջերուն, հովազը:

Լանդշաֆտային (համալիրային) բնական հուշարձանների շարքին կարելի է դասել անտառային գոտու մի շարք գեղատեսիլ հատվածներ:

Թեև անտառները կազմում են Արցախի տարածքի 36 %-ը, սակայն որոշ ծառատեսակներ և այլ բուսատեսակներ գտնվում են անհետացման վտանգի տակ:

Արցախի բնական հուշարձանների տեղաբաշխումը տրված է քարտեզախեմայում (նկ.1):

Այսպիսով, Արցախի բնական հուշարձանները ըստ իրենց նշանակության կարելի է խմբավորել 4 տիպերի մեջ:

1. Լանդշաֆտաբնապատկերային՝ Թարթառի, Թրղիի հովիտները, Հունոտի կանիոնը, բազմաթիվ ժայռերը, քարափները, անձեռակերտ քանդակները, ջրվեժները, սահանքները:

2. Գիտաճանաչողական հուշարձաններ՝ երկրաբանական մերկացումները, ռելիեֆի առանձին ձևերը և երկրաբանական մարմինները՝ սողանքներ, բեղչենդներ, նեկկեր, ոկյուզային աղբյուրներ, ինչպես նաև դարավոր և պաշտամունքի ծառեր և պուրակներ, ռելիկտային բուսատեսակներ՝ կենի, մրտավարդ և այլն:

3. Պատմահնեաբանական՝ կարստային քարայրները, որոնք ծառայել են քարե դարի, ինչպես նաև ավելի ուշ ժամանակաշրջանի մարդկանց համար որպես բնակատեղեր, ապաստարաններ, թաքստոցներ, մթերքների պահպանության պահեստներ: Նմանատիպ նշանակություն ունեն նաև անառիկ ժայռերը, որոնց վրա կառուցվել են բերդեր:

4. Վերջապես բնական հուշարձանները ունեն նաև կիրառական մեծ նշանակություն զբոսաշրջիկության զարգացման և բնակչության հանգիստը բովանդակալից կազմակերպելու համար:

Արցախի տարածքի բնական հուշարձանների պահպանությունը չափազանց կարևոր խնդիր է: Այստեղ բնական հուշարձանների ուսումնասիրման և պահպանման հարցերի վրա ընդհանրապես ուշադրություն չի դարձվել: Պահպանության աշխատանքների կազմակերպման համար առաջին հերթին անհրաժեշտ է չափագրել, անձնագրավորել և հաշվառման ենթարկել բոլոր բնական հուշարձանները, նրանց ամրացնելով համապատասխան գրառումներ: Հարկավոր է պետության կողմից պաշտպանության տակ վերցնել առանձին բուսատեսակները (ռելիկտային, հազվադեպ, էնդեմիկ, անհետացող), դարավոր և պաշտամունքի ծառերն ու պուրակները, առանձին կիրճերը, ժայռերը, ջրվեժները, քարայրները և բնության այլ հուշարձանները: Մեր կարծիքով անհրաժեշտ է Արցախում ստեղծել արգելանոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր: Հարկավոր է արգելավայրային ռեժիմ սահմանել Հունոտի կիրճում, Թրղիի հովիտում, ինչպես նաև այլ առանձին եզակի հուշարձանների տարածքներում:



Նկ. 1. Արցախի բնական հուշարձանների քարտեզախմբան

- I. Երկրաբանական ուշագրավ մերկացումներ: 1. Հավթախաղաց, 2. Ակարակաբերդ, 3. Բերդաբար, 4. Զրաբերդ, 5. Թարխանաբերդ, 6. Շիկաբար, 7. Կաշաղակաբերդ, 8. Պյոթր, 9. Կուսաբերդ, 10. Ղլեն հուր, 11. Նեկկ (ճարտար)
- II. Անձեռակերտ քանդակներ: 12. Հարսմաբար, 13. Եղե քար (Պեն Շեն), 14. Հարսմաղբյուր, 44. Մարդ քար
- III. Զրվեմներ
- IV. Գեղատեսիլ կիրճեր, հովիտներ: 15. Թրդիի, 16. Թարթառի, 17. Կարկառի (Հունոտի), 18. Վարանդայի
- V. Ուլլուգային աղբյուրներ: 19. Շոր աղբյուր (Շահ բուլաղ), 20. Անալի աղբյուր
- VI. Կարստային քարայրներ: 21. Հավթախաղաց, 22. Մոխրաբերդ, 23. Սառնատուն (Չլդրան), 24. Սառնաձոր, 25. Բալարի պուն (Ղազանչի), 26. Եզնավոր (Նոր Մարաղա), 27. Ուլուգաբ, 28. Բլեն Կարան (Խաչեն), 29. Քարազուլիս, 30. Կատվեն Կարան (Խանաբադ), 31. Ղորփի (Ղահրազ), 32. Հունոտի կիրճ, 33. Սզնախ, 34. Շրմանա քերծ (Գիշի), 35. Զարդաշեն, 36. Ծծախաչ, 37. Ազդիս, 38. Զորի (Վարդապետ), 39. Ղաղուն կիռ (Զրաբերդ), 40. Շմանեկ (Տող), 41. Լուվա, 42. Մեծ Քարազուլիս (Ղահրազ), 43. Ընդաբար (Ղահրազ)

Պարավոր և պաշտամունքի ծառեր

- VII. Սոսի: 45. Սխտորաշեն, 46. Հաղորուք, 47. Բանագուր, 48. Հերիեր, 49. Տող-Ֆիզուլի ճամբեզր
VIII. Փռչնի: 50. Ղաիրավ, 51. Զրասնի, 52. Մարդակերտ
IX. Թղենի (Թղարնի): 53. Գիշի, 54. Տունի, 55. Ճարտար, 56. Մեծ Թաղլար
X. Ընկուզենի: 57. Գյուլաթաղ
XI. Թեղի: 58. Խանձածոր, 60. Խաչմաչ, 61. Ճարտար, 63. Ավետարանոց
XII. Կենի: 64. Պարուն կենի (Ծամծոր)
XIII. Կաղնի: 65. Զորավոր (Հին քյաթուկ), 66. Մաղարախուք (Կարմիր), 67. Խնձորխաչ (Ազնախ), 68. Զուխտ Պառավաճառ (Թաղավարդ), 69. Կվախաչ (Կարդաշատ), 70. Զիրավոր (Բերդածոր), 71. Ըխտըլ ծառ (Աշան), 80. Տավարախաչ (Կուսապատ)
XIV. Պաշտամունքի պուրակներ: Հացենու՝ 74. Կարմիր Շուկա, Կաղնու՝ 75 Շառեխ (Ննգի), 78. Սուրբ (Ղզղալա), Փռչնու՝ 76. Կախան (Հին Դրախտիկ), Թեղու՝ 62. Կարմիր Եղնի (Տունի), 59. Խանցք, 77. Զարգա Մարագ (Սպիտակաշեն-Եմիշ-ջան), Ուռենի՝ 72. Ավետարանոց, 73. Ազնեք, 79. Հոռաթաղ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Թ. Արցախի պաշտամունքի ծառերը: Սովետական Ղարաբաղ թերթ, հ. 245, 22 հոկտեմբերի 1988:
2. Բարխուդարյան Մ. Արցախ: Երևան, 1996, 300 էջ:
3. Սկրտչյան Շ. Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները: Երևան, 1985, 356 էջ:
4. Природа и древний человек. М., 1981, 222 с.

ГАГИНЯН Р. Х., АРАКЕЛЯН Ю. А., ГЕВОРКЯН Ф. С.

ПРИРОДНЫЕ ПАМЯТНИКИ АРЦАХА И ПРОБЛЕМЫ ИХ ОХРАНЫ

Резюме

Уникальные природные памятники Арцаха имеют большое научное, историческое, краеведческое, познавательное, эстетическое и практическое значение.

Природные памятники Арцаха можно разделить на 4 группы:

1. Ландшафтно-пейзажные долины рек Тертера, Трхи, каньон Унута, многочисленные уникальные скалы, обрывы, водопады, пороги, нерукотворные скальные скульптуры, отдельные участки лесного ландшафта.

2. Научно-познавательные отдельные геологические обнажения, геологические тела и формы рельефа (оползни, белленды, некки, воклюзные источники), реликтовые растения (каркас, рододендрон и т. д.), вековые и священные деревья.

3. Историко-археологические-карстовые пещеры, неприступные скалы, над которыми построены крепости.

4. Наконец, природные памятники также имеют практическое значение для развития туризма и отдыха населения.

До последнего времени охране природных памятников в Арцахе не уделялось внимания. Для организации охранных работ необходимо изуче-

ние, учет и паспортизация всех природных памятников. Необходимо взять под охрану отдельные реликтовые, исчезающие растения, вековые деревья, а также некоторые отдельные уникальные памятники, установить заповедный режим в долинах рек Тертер, Трхи, в каньоне Унут.

GAGINIAN R. KH., ARAKELIAN YU. A., GEVORKIAN F. S.

ARTSAKH NATURAL VIEW - WORTHY SITES AND PROBLEMS OF THEIR PROTECTION

Summary

Unique Artsakh natural view-worthy sites have a great scientific, historical, cognitive, aesthetic and practical impact.

Artsakh natural view-worthy sites can be classified into 4 groups:

1) picturesque landscape sites - such as valleys of the Terter and Trghee rivers, the canyon Unoot, a great number of unique rocks, precipices, waterfalls, rapids, sculpture created by natural forces, certain parts of the wooded landscape;

2) scientific cognitive sites - certain escarpments, geological bodies and relief forms (landslides, bad lands, necks, springheads), relic vegetation (Ulmus, rhododendrons and others), centuries-old and sacred trees;

3) historio-archeologic sites - karst caves, unclimbable cliffs having been used as basements for citadels;

4) natural view-worthy sites having practical value for development of tourism and recreation of population.

Till recently Artsakh natural view-worthy sites protection was not considered of any importance. In the framework of protection efforts it is the must to study, register and organize certification of all the Artsakh natural view-worthy sites.

A number of relic, disappearing plants should be taken under protection as well as centuries-old trees and some other Artsakh natural view-worthy sites. The Terter and Trghee rivers valleys together with the canyon Unoot should be made reserves.

УДК- 658.012.3

Տ Ն տ ե ս ա զ ի տ ո թ յ ու ն

Ռ. Յ. ՍԱՆՉԱՍԱՐՅԱՆ

ՓՈՔՐ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Անկախության հռչակումից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում շուկայական հարաբերությունների հիմքի վրա գործող տնտեսակարգի ձևավորման գործընթացը դեռևս չի ապահովել զարգացման նորմալ ընթացք ունեցող տնտեսություն: Պատճառները բազմաթիվ են՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի: Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումներն անշրջելի են, որոնք, սակայն, առևա տնտեսական և սոցիալական, հնչպես նաև ազգային-պետական շահերի և իրողությունների հաշվառմամբ ենթադրում են որակական և քվանտակային նոր ուղղվածություն:

Վերջինս պետք է ենթադրի բարեփոխումների արդյունավետության աճ: Դրա իրականացման էական գործոն է հանրապետությունում ներդրումային քաղաքականության ակտիվացումը և ձեռնարկատիրության զարգացումը:

Շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում տնտեսության ցանկացած ոլորտում կարևորագույն դեր ունշանակություն է ձեռք բերում ձեռնարկատիրական գործունեության կազմակերպումը: Փաստորեն, ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, անկախ այն հանգամանքից գտնվում է կայացման, զարգացման, հասունացման, թե անկման փուլում, միևնույն է, զբաղված է ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմամբ, այլ կերպ անհնար է ապահովել նրա առջև դրված գործարար նպատակները: Կարևոր նշանակություն ունի ձեռնարկատիրական գործունեության ծավալման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

ԼՂՀ տնտեսական պայմաններում մեծ ուշադրության է արժանի փոքր գործարարության զարգացումը: Շուկայական հարաբերությունների արմատավորումը պահանջում է ստեղծել փոքր ձեռնարկությունների կուռ ցանց, որոնք կակտիվացնեն տնտեսության կառուցվածքային փոփոխությունները, կնպաստեն ծախսերի արագ հատուցմանը: Փոքր գործարարությունը պետք է նպաստի ապրանքներով ու ծառայություններով շուկայի արագ հագեցմանը, ճյուղային մենաշնորհի հաղթահարմանը, մրցակցության ընդլայնմանը, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների արագ ներդրմանը, արտահանման պոտենցիալի բարձրացմանը:

Աշխարհի շատ երկրներում փոքր գործարարության ձևավորման, պահպանման և զարգացման աջակցության հարցերին մեծ նշանակություն է տրվում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հասարակական ինստիտուտների կողմից: Պատճառն ակնհայտ է. երկիրը և ժողովուրդը ավելի են հարստանում, եթե փոքր գործարարությունը բարգավաճում է: Այդ հատվածի զարգացմամբ շահագրգռված են հասարակության բոլոր շերտերը, տնտեսական խոշոր կառուցվածքները, տնտեսական և հասարակական ինստիտուտները, գիտակցելով, որ փոքր ձեռնարկությունների հաջող գործունեությունը այն բազիսն է, որի վրա կանգնած է տնտեսական կարգը, այն հիմքը, որը զբաղվածություն է ապահովում ամբողջ բնակչության համար:

Ուրեմն, մեր հանրապետությունում, որքան արագորեն ստեղծվի փոքր ձեռնարկությունների անհրաժեշտ քանակություն, այնքան արագորեն կընթանա ամբողջ շուկայական տնտեսության կազմավորումը:

Շատ երկրների փորձը վկայում է, որ փոքր գործարարության հատվածը բնորոշվում է ձեռնարկությունների տիպերի, արտադրանքի պատրաստման գործընթացների մեծ բազմազանությամբ: Փոքր գործարարության հիմնահարցերը նույնպես բազմազան են ու բարդ: Դրանցից են, օրինակ.

- տեխնոլոգիայի և կառավարման հմտության ցածր մակարդակը, գիտահետազոտական և կոնստրուկտորական աշխատանքների կատարման անբավարար պոտենցիալը, տեխնոլոգիայի և տեխնոլոգիական տեղեկությունների ձեռք բերման դժվարությունները, անարդյունավետ սարքավորումների հաճախակի օգտագործումը, դժբաղդ փոխարինման դժվարությունները ներքին շուկայի հնարավորությունների շրջանակներում,
- դժվարությունները մարկեթինգի և արտադրանքի իրացման ասպարեզում, բարձր մրցակցությունը ձեռնարկությունների միջև ներքին և արտաքին շուկայում, խոշոր ձեռնարկությունների ներթափանցումը այն արտադրանքի շուկաները, որը թողարկվում է առավելապես փոքր և միջին ձեռնարկությունների կողմից,
- մեկ աշխատողի հաշվով արտադրողականության, ավելացված արժեքի, թողարկված արտադրանքի և հիմնական կապիտալի ցածր մակարդակը, շենքերի վարձակալության և շինարարության դժվարությունները այն աշխատանքում, ուր կա որակյալ աշխատուժ և ենթակառուցվածք,
- ֆինանսական ռեսուրսներից օգտվելու սահմանափակ հնարավորությունները, վարկային միջոցների ավելի բարձր ռիսկը,
- հումքի ավելի բարձր արժեքը, քանզի գնվում են ոչ մեծ խմբաքանակներ, ներքին շուկայում դրանց փոխարինիչների ապահովման դժվարությունները:

Փոքր գործարարությանը աջակցելու քաղաքականությունը տարբեր երկրներում պետք է կիրառել տարբերակված ձևով, կախված պայմաններից, ֆինանսական միջոցների, տեխնոլոգիայի, աշխատուժի, հումքային ռեսուրսների առկայությունից, ներքին շուկայի չափերից և այլն: Օրենսդրությամբ փոքր ձեռնարկությունների համար կարող են սահմանվել գործունեության արտոնյալ տնտեսական պայմաններ:

Համաձայն ԼՂՀ «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքի (28 փետրվարի, 1995 թ.) փոքր ձեռնարկությունների են վերագրվում արդյունաբերության և շինարարության մեջ՝ մինչև 100, նյութական արտադրության մյուս ճյուղերում՝ 25, գիտության և գիտական սպասարկման բնագավառում՝ 50, այլ ոլորտում՝ 12 աշխատատեղ ունեցող ձեռնարկությունները: ԼՂՀ օրենսդրությամբ կարող են սահմանվել փոքր ձեռնարկության նաև այլ հատկանիշներ՝ կապված նրա հիմնական միջոցների արժեքի կամ արտադրության ծավալի հետ: Փոքր ձեռնարկությունը ինքնուրույն է իր տնտեսական գործունեությունն իրականացնելու, հարկերը և մյուս պարտադիր վճարումները կատարելուց հետո մնացյալ շահույթը տնօրինելու գործում: ԼՂՀ-ում փոքր ձեռնարկությունները կարող են ստեղծվել քաղաքացիների, ընտանիքի անդամների և այլ անձանց կողմից, որոնք համատեղ վարում են աշխատանքային գործունեություն, ինչպես նաև պետական, վարձակալական, համատեղ ձեռնարկությունների, կոոպերատիվների և բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնք համարվում են իրավաբանական անձ: Փոքր ձեռնարկություններ կարող են ստեղծվել նաև գործող ձեռնարկությունների, միավորումների կազմից մեկ կամ մի քանի ստորաբաժանումների կամ կառուցվածքային միավորումների անջատմամբ, եթե ձեռնարկության գույքի տիրոջ համաձայնությունը ապահովված է նախօրոք

ծեռք բերված պայմանագրային պարտավորություններով: Այս դեպքում, այն ձեռնարկությունը, որից առանձնացվել է փոքր ձեռնարկությունը, դրա հիմնադիրն է:

Ձեռնարկիչ բառը հաճախ օգտագործվում է փոքր ձեռնարկությունների տնօրեններին որակելու համար, քանի որ փոքր ձեռնարկությունների տնօրենները սովորաբար իրենք են իրացնում իրենց գործարարությունների գործառույթից շատերը:

Շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում փոքր և միջին գործարարության ինտենսիվ զարգացում և փոքր գործարարության վերափոխման գործընթաց: Այսպես, ԱՄՆ-ում 80-ական թվականներին փոքր ֆիրմաների թիվը հասավ ավելի քան 650 հազարի, միաժամանակ յուրաքանչյուր չորրորդ ֆիրման լուծարվում էր իր գործունեության առաջին տարում, իսկ բոլոր նոր ստեղծված ֆիրմաների 90 %-ը չէին կարողանում դիմանալ 4-տարուց ավելի: Այստեղից պարզ է դառնում, որ փոքր գործարարությունում, մրցակցության ազդեցության ներքո կամ խոչընդների ճնշման տակ, մշտապես տեղի է ունենում հենրի քայքայման և նորերի ստեղծման գործընթաց, որը հատուկ է նաև վերուպայի և Միջին Ասիայի երկրներին և զգալի ազդեցություն է ունենում զբաղվածության մակարդակի վրա: Շուկայական տնտեսությունում այդ գործընթացն արդեն վերածվել է օրինաչափության: Օրինակ, Գերմանիայում փոքր և միջին ձեռնարկություններում ընդգրկված է աշխատունակ բնակչության 70 %-ը: Այդ ձեռնարկությունների կենսունակությունը բացատրվում է դրանց բարձր մասնագիտացմամբ, ճկունությամբ և տեխնիկական նորություններին արագ արձագանքելու ունակությամբ: Մի շարք երկրներում փոքր գործարարությունը ապահովում է նոր աշխատանքային տեղերի մինչև 80 %-ը:

Այսպիսով, շուկայական տնտեսության պայմաններում, նպատակահարմար է հիմնադրել փոքր ձեռնարկություններ, որոնք կարողանում են ժամանակին արձագանքել փոփոխվող հարաբերությունների պահանջներին:

Ընդ որում ձեռնարկատիրության զարգացումը բազմակողմ և շարունակական գործընթաց է, որի սկզբնական փուլում առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում դրա պետական կարգավորման և հատկապես ֆինանսավարկային ու հարկաբյուջետային կարգավորման դերի ձևավորումը, ինչպես նաև համապատասխան իրավական դաշտի ստեղծումը: Այս ուղղությամբ նախատեսվող միջոցառումները պետք է նպատակաուղղել ձեռնարկատիրության կարգավորման գործող մեխանիզմների կատարելագործմանը և նորերի ներդրմանը, որոնք հիմնվում են կարգավորման անուղղակի մեթոդների վրա:

Ձեռնարկատիրության զարգացման ներկա փուլում հարկ է որոշ արտոնություններ սահմանել տնտեսության զարգացման կարևոր ժյուրերի ձեռնարկությունների համար որոշակի կոնկրետ ժամանակահատվածում: Առաջին հերթին դա վերաբերվում է ինվեստիցիոն և ինովացիոն գործունեությանը, էներգետիկային, գյուղատնտեսական մթերքների արտադրմանն ու վերամշակմանը և համընթացային արդյունաբերությանը:

Շուկայական հարաբերությունների ձևավորումը պահանջում է ստեղծել հուսալի տեղեկատվական միջավայր, որը կնպաստի տնտեսական գործընթացների անորոշության աճի իջեցմանը: Տվյալ խնդիրը առավել կարևորություն է ստանում ձեռնարկատիրության ոլորտում, որի լուծմամբ զգալիորեն կբարելավվի ձեռնարկատերերին տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվության որակը, օպերատիվությունը և կբարձրանա գործարար ակտիվության մակարդակը:

Տնտեսական բարեփոխումների ներկա փուլում հրատապ խնդիր է ձեռնարկության և դրա պետական կարգավորման բնագավառների համար կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման

համակարգի ստեղծումը: Այս բնագավառների համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շուկայի և նրանում ընթացող գործընթացների անընդհատ բարձրացման պայմաններում մրցակցությանը դիմանում են այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք տիրապետում են ինքնուրույն գործունեություն ծավալելու ունակությունների, ճիշտ են ընթեռնում շուկայական օրենքներն ու օրինաչափությունները, ժամանակին արձագանքում են դրանց փոփոխություններին և պետական կարգավորման ազդակներին, հավաքագրում են հըմուտ կառավարիչներ ու մասնագետներ: Նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կազմակերպել մենեջմենտի և մարկետինգի հատուկ դասընթացներ, ինչպես ձեռնարկությունների ղեկավարների և մասնագետների, այնպես էլ անհատ ձեռներեցների համար՝ այլ երկրներից հրավիրելով համապատասխան մասնագետների:

1998 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ԼՂՀ պետական ռեզիստրում գրանցվել է 738 անհատ ձեռներեց և 1811 ձեռնարկություն, որից 248-ը պետական սեփականության վրա հիմնված ձեռնարկություններ, 902-ը՝ կոլեկտիվ և 611-ը՝ քաղաքացիների սեփականության վրա հիմնված ձեռնարկություններ: Մասնավոր ձեռնարկությունների գերակշիռ մասը բաժին է ընկնում ոչ նյութական արտադրության ճյուղերին: Դրանք հիմնականում փոքր ձեռնարկություններ են: 1998 թ. 1997 թ-ի համեմատությամբ ձեռնարկությունների թվաքանակը աճել է 289-ով: Ձեռնարկությունների մեծ մասը իրականացնում են «գյուղատնտեսություն և ձկնորսություն» և «մեծածախ, մանրածախ առևտուր և անձնական օգտագործման առարկաների նորոգում» գործունեությունը: Հեռանկարում նպատակահարմար է հանրապետության ձեռնարկությունների մասնագիտացումը գորգերի, կարպետների, բնական մետաքսից արտադրվող գործվածքի, կաշվե կոշիկների, գինու, կոնյակի տարբեր տեսակների, մրգերից, պտուղներից արտադրվող պահածոների արտադրությամբ: Սակայն հանրապետությունում ձևավորվել է փոքր գործարարության հետագա գործունեության անորոշ պատկեր, որի հիմնական պատճառը կիրառվող հարկային քաղաքականությունն է, որը ոչ միայն բարենպաստ պայմաններ չի ստեղծում մանր և միջին բիզնեսի զարգացման համար, այլև շատ հաճախ արգելակում է նրա հետագա գործունեությունը: Այդ խնդիրը ենթակա է հրատապ լուծման:

Այսպիսով, հանրապետությունում ձեռնարկատիրության զարգացումը պահանջում է լրացնել նոր օրենսդրական և նորմատիվային հիմքերը, մասնավորապես մշակել և ընդունել ձեռնարկությունների կազմակերպա-իրավական տեսակների համար առանձին օրենքներ, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունը, ինչպես նաև զուգահեռաբար կատարելագործել ընդունված օրենքները և նորմատիվային ակտերը, դրանք համապատասխանեցնելով տնտեսության պահանջներին:

Տնտեսագիտական գիտությունների ամբիոն

Ստացված է 10. 09. 99. թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Միհրան, Թամազյան Արտուր - Հայաստանի անցումային տնտեսությունը - /տնտեսական և գործնական հարցեր/, Եր., - ՏՀԻ հրատարակչություն, 1997 թ., էջ 37-48:
2. Մելքունյան Միքայել - Ձեռնարկատիրություն և ներդրումներ, Եր., «Լույս» հրատարակչություն, 1998 թ., էջ 3-13:
3. Եկոմոնիկա ամսագիր, 1992 թ., հ. 7-8, էջ 58-70:

4. Вестник Московского университета. Экономика. 1997 г., N 6, стр. 92-113.
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետարչության տեղեկատվություն:
6. Էկոնոմիկա ամսագիր, 1994 թ., հ. 1-2, էջ 38-46:

МАНГАСАРЯН Р. Я

РАЗВИТИЕ МАЛОГО БИЗНЕСА В АРЦАХЕ

Р е з ю м е

На этапе формирования и дальнейшего развития рыночных отношений в любой сфере экономики важную роль и значение приобретает предпринимательская деятельность, формы и уровень ее организации.

В экономических условиях НКР достойно большого внимания развитие малого бизнеса.

Развитие предпринимательства в НКР требует создания сети малых предприятий, которые активизируют структурные изменения в экономике, способствуют быстрому возмещению расходов, оперативному реагированию на изменения потребительского спроса.

Развитие предпринимательства в НКР требует также новых законодательных и нормативных основ.

RUSAN MANGASARYAN

THE CROWTH OF SMALL BUSINESS IN ARTSAKH

S u m m a r y

At the stage of forming and growth of market relations in any sphere of economics business, its forms and the level of its organization acquire an important role and meaning.

In economic conditions of Nagorno-Karabakh the growth of small business is worth notice.

The growth of business in NK demands the creation of nets of small enterprises, which activize structural changes in economics, favour the quick reimbursement, operative respond to the changes of consumers demand.

The growth of business in NK also demands new legislative and normative foundations.

Տնտեսագիտություն

ԲԵԼԱ ԳԱՐԻԻԵԼՅԱՆ

ԼՂՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՈՎԱՐՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կառավարման կազմակերպական կառուցվածքների ճիշտ ընտրության հարցը տնտեսության կարևորագույն հիմնահարցերից մեկն է: Հատկապես անհրաժեշտ է անցումային շրջանում ուշադրությունը սևեռել արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման կազմակերպական կառուցվածքների վրա: Որպես կանոն, ձեռնարկությունների հիմնական նպատակներն են՝ գործունեության ծավալի ընդարձակումը, վաճառքի և շահույթի աճը: Այդ նպատակներին հասնելը բարենպաստ է անդրադառնում ոչ միայն շուկայում դիրքի կայունացման և ձեռնարկությունների հեղինակության աճի վրա, այլև նյութական դրության և ղեկավարության ու ողջ անձնակազմի հեղինակության վրա: Հետևաբար, անհրաժեշտ է ընտրել կազմակերպական այնպիսի կառուցվածք, որը համապատասխանում է կազմակերպության ռազմավարական շահերին և ապահովում նրա արդյունավետ համագործակցությունը շրջակա միջավայրի հետ ու նախատեսված նպատակների իրագործումը:

Կազմակերպության կառուցվածքը չի կարող մնալ անփոփոխ, որովհետև փոխվում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միջավայրը:

Կառավարչական աշխատանքների կազմակերպումը մի գործառույթ է, որը պետք է իրականացնեն բոլոր ղեկավարները՝ անկախ նրանց դիրքից: Սակայն կազմակերպության կառավարման կազմակերպական կառուցվածքների վերաբերյալ կառավարչական որոշումը միշտ ընդունվում է բարձրագույն օղակի ղեկավարության կողմից:

«Լավագույն կառուցվածքն այն է, որը թույլ է տալիս լավագույն ձևով փոխգործակցել արտաքին միջավայրի հետ, արդյունավետորեն ու նպատակահարմար բաշխել և ուղղել աշխատակիցների ջանքերը, և այդպիսով բավարարել հաճախորդների պահանջմունքները, նպատակներին հասնել բարձր արդյունավետությամբ»¹:

Կազմակերպական կառուցվածքների հիմնական նպատակն այն է, որ ապահովվի կազմակերպության առջև դրված խնդիրների լուծումը: Որոշ հեղինակներ համարում են, որ կազմակերպության ընդհանուր կառուցվածքի ընտրությունը այն լուծումն է, որը վերաբերում է ռազմավարական ուղղությանը, որովհետև դա է որոշում, թե կազմակերպությունն ինչպես է գործադրելու իր ջանքերը հիմնական նպատակներին հասնելու համար: Կազմակերպական կառուցվածքը քարացած ձև չէ, որովհետև այն հիմնվում է նպատակների վրա: Այսինքն՝ նպատակների փոփոխությունը առաջ է բերում կազմակերպական կառուցվածքների փոփոխություններ:

¹ В. В. Гончаров, «В поисках совершенства управления: Руководство для высшего управленческого персонала» 1 том. 1996 г. М., МНИИПУ.

Աղյուսակ 1

Ստեփանակերտի որոշ պետական փակ բաժնետիրական ընկերությունների հիմնական ցուցանիշները 1996-1998 թթ.

h/h	Ցուցանիշներ	Զափ միավ	Կոնդենսատորների գործադրան			Էլեկտրատեխ. գործադրան			Գինու գործարան			Կաթի կոմբինատ			Կահույքի ֆաբրիկա		
			1996	1997	1998	1996	1997	1998	1996	1997	1998	1996	1997	1998	1996	1997	1998
1	Իրացում	հ. դր.	35482	32154	29424	78524	94335	71074	186598	142038	84574	30187	25093	19856	92671	103358	113341
2	Արտադր. ծավալը	հ. դր.	36125	33698	30372	85124	101548	77738	220951	154339	194550	31546	27951	23722	93685	108557	135820
3	Ծախսերը, այդ թվում	հ. դր.	30214	27541	24678	70234	87562	65635	164259	128564	70136	27921	24854	21682	91119	97665	105132
	ուղղակի	հ. դր.	28455	25917	23247	64692	73326	56596	147711	117997	73396	19907	19342	15924	66070	67811	73487
	անուղղակի	հ. դր.	1759	1624	1431	11542	14236	9039	16548	10567	2740	8014	5512	3932	25049	29854	31645
4	Միջին աշխատավ.	հ. դր.	15429	14689	12801	19210	23687	17746	80236	64582	31942	7452	5198	2758	6995	7537	9666
5	Էլեկտրաէներգիա	հ. դր.	2368	2139	1925	8651	10241	7059	11264	9568	5253	6854	4995	3336	2857	3421	4730
6	Շահույթը	հ. դր.	5268	4612	4747	2290	6773	5439	22339	13474	8438	2266	1139	-1826	1552	5693	8209
7	Աշխատողների թիվը	մարդ	71	64	59	165	145	120	155	132	110	42	36	30	64	77	77
8	Աշխ. արտադրողակ.	հ. դր.	622.8	612.7	607.4	553.0	737.0	646.1	1382.2	1183.7	890.3	1051.5	1035.2	912.4	1587.9	1507.7	1886.4
9	Ներդրում. ծավալը	հ. դր.	-	-	-	-	-	3000	-	-	-	-	-	-	-	-	2000

*Տրանսպորտային ծախսերին ուղղվում են ընդհանուր ծախսերի մինչև 5-6%:

Ժամանակակից արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման կազմակերպական կառուցվածքների հիմնական տեսակներն են՝ գծային-ֆունկցիոնալ, այդ թվում՝ դիվիզիոնալ և օրգանական (նախագծային, մատրիցային, քվադրիհիերարխիկ)։

Գոյություն ունեն կառավարման կազմակերպական կառուցվածքների էվոլյուցիայի մի քանի փուլեր։

Առաջին փուլում ոչ մեծ ձեռնարկությունները ղեկավարում են հիմնադիր-ձեռնարկատերերը, գործում է կառավարման պարզ համակարգը։

Երկրորդ փուլում լայն ծավալում են ստանում խոշոր կազմակերպությունները, գլխավորապես բաժնետիրական ընկերությունները, որոնք կառավարվում են գծային-ֆունկցիոնալ կազմակերպական կառուցվածքով, ստեղծվում են նաև դիվիզիոնալ կառուցվածքներ։

Երրորդ փուլում ստեղծվում են դիվերսիֆիկացված խոշոր ընկերություններ, որոնցում դիվիզիոնալ կազմակերպական կառուցվածքները վերանվանվում են նախագծայինի և մատրիցայինի։


ԼՂՀ-ում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ տարածքում ստեղծված մյուս հանրապետություններում, շուկայական էկոնոմիկայի անցումային շրջան է տիրում։ ԼՂՀ-ում գործում են մի շարք ձեռնարկություններ, որոնց տընտեսական գործունեության հիմնական ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում (տե՛ս աղյուսակ թիվ 1)։

Հարկ է նշել, որ երեք տարիների ընթացքում, հինգ ձեռնարկություններից շահույթն ավելացել է միայն կահույքի ֆաբրիկայում, էլեկտրատեխնիկական գործարանում շահույթը նվազել է, իսկ կոնդենսատորների գործարանում այն 1997 թ. նվազել է, 1998 թ.՝ ավելացել։ Վնասով է աշխատել կաթի կոմբինատը։ Քանի որ բոլոր այս ձեռնարկություններն աշխատում են ինքնաֆինանսավորմամբ, ապա ապրանքների իրացման քանակից է կախված աշխատավարձը և շահույթը։


Ուսումնասիրենք այս ձեռնարկություններից մի քանիսի կառավարման կազմակերպական կառուցվածքները (տե՛ս գծանկարներ 1.1., 1.2, 1.3)։

Գծանկար 1.1

«Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարան» ՊԺԲԸ-ի կառավարման կառուցվածքը




«Ստեփանակերտի կաթի կոմբինատ» ՊԲԸ-ի կառավարման
կառուցվածքը



Գծանկար 1.3

«Ստեփանակերտի կոնդենսատորների գործարան» ՊԲԸ-ի
կառավարման կառուցվածքը



Դեռևս ԼՂՀ-ի գործող ձեռնարկությունների կառավարման կազմակերպական կառուցվածքները շարունակում են մնալ որպես գծային-ֆունկցիոնալ կազմակերպական կառուցվածքներ:

Ֆունկցիոնալ (գործառնական) կառուցվածքները երբեմն կոչվում են ավանդական կամ դասական, քանի որ առաջինն են ուսումնասիրվել և մշակվել: Գծային-ֆունկցիոնալ կառուցվածքները հիմնականում օգտագործվում են միջին չափի ընկերություններում: Ֆունկցիոնալ կառուցվածքը կազմակերպության բաժանումն է առանձին տարրերի, որոնցից ամեն մեկն ունի իր հըստակ որոշված կոնկրետ խնդիրներն ու պարտականությունները: Մեր վերոհիշյալ օրինակներում կազմակերպությունը բաժանվում է բլոկների, որոնք ունեն հստակ ուղղագծված խնդիրներ:

Ընկերության ավանդական ֆունկցիոնալ բլոկները արտադրության, մարքեթինգի և ֆինանսների բաժիններն են: Դրանք գործունեության լայն ոլորտներ են կամ գործառույթներ, որոնք ունեն ընկերությունները սահմանված նպատակներին հասնելու համար:

Հարկ է նշել, որ ԼՂՀ-ում առայժմ ոչ բոլոր ձեռնարկություններում են ձևավորված մարքեթինգի հատուկ բաժիններ, որն, ինչ խոսք, լուրջ բացթողում է արդի տնտեսավարման պայմաններում: Եթե որպես օրինակ դիտարկենք կոնդենստորների գործարանը, ապա լիովին կհամոզվենք, որ այստեղ մարքեթինգի բաժնում լիովին բացակայում է գովազդային բաժինը, նորամուծության բաժինը և մի շարք այլ բաժիններ:

Նպատակահարմար է գծային-ֆունկցիոնալ կառուցվածքն օգտագործել այն կազմակերպություններում, որոնք թողարկում են համեմատաբար սահմանափակ անվանացանկով արտադրանք, և իրենց գործունեության ապահովման համար պահանջում են ստանդարտ կառավարչական խնդիրների լուծում: Այդ կառուցվածքները նախ՝ խթանում են գործարար և պրոֆեսիոնալ մասնագիտացումը: Երկրորդ՝ նվազեցնում են ջանքերի կրկնորոշումը, նյութական ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը: Երրորդ՝ բարելավում են կորորդինացումը: Անհրաժեշտ է նշել նաև այն, որ առանձին բաժիններ կարող են շահագրգռված լինել իրենց ստորաբաժանումների նպատակների ու խնդիրների իրագործման մեջ, ինչը մեծացնում է ֆունկցիոնալ ոլորտների միջև հակասությունների հնարավորությունը: Մեծ կազմակերպությունների մեջ հրամանների շղթան՝ սկսած ղեկավարից մինչև ամսիջական կատարողները, չափազանց երկար է: Սակայն կա մի միտում, երբ ամսիջապես բարձրարժեքի ղեկավարին են ենթարկվում բոլոր գծային ծառայությունները, որոնք կապված են արտադրության հետ:

ԼՂՀ-ում կառավարությունն ամսիջական մասնակցություն ունի ձեռնարկությունների վերակառուցման նպատակային ծրագրերին: Ընդսմին, խոսքը ոչ թե մասամբ կամ լիովին պետական սեփականություն համարվող ձեռնարկությունների գործունեությանը պետության միջամտության մասին է, այլ՝ սեփականատերերի մի դասի ստեղծման, որը շահագրգռված լինի արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործման, այսինքն՝ խրթանների այնպիսի կառուցվածքի ստեղծման մեջ, որի հիմքում դրված են սեփականության իրավունքները: Այս պատճառով տնտեսության ապապետականացումը մի խնդիր է, որն առաջնահերթ լուծում է պահանջում շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման, ձեռնարկությունների կառավարման բարելավման գործում:

Պետությունը, մասնավորեցնում իրականացնելով, ձգտում է լուծել բազմաթիվ խնդիրներ՝ բարձրացնել ակտիվների արդյունավետ օգտագործումը, կատարելագործել կորպորատիվ կառավարումը, քաջալերել ներդրումները և ձեռնարկությունների վաճառքը «ռազմավարական» ներդրողներին, ընդլայնել ձեռնարկությունների մուտքը դեպի նոր տեխնոլոգիաներ և կապիտալի շուկա:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ձգտելով օգտագործել միջազգային առաջավոր փորձը և ղեկավարվելով շուկայական տնտեսության օրինաչափություններով, ԷՂՀ-ի արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման կազմակերպական կառուցվածքներն ունեն կատարելագործման միտում, թեև զգալի են կառավարման արդյունավետության բարձրացման դեռևս չլուծված հիմնախնդիրները:

Տնտեսագիտության ամբիոն

Б. В. ГАБРИЕЛЯН

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ОРГАНИЗАЦИОННЫХ СТРУКТУР УПРАВЛЕНИЯ ПРОМЫШЛЕННЫМИ ПРЕДПРИЯТИЯМИ НКР

Резюме

В работе рассматриваются особенности выбора формы правления в НКР в условиях осуществления процесса приватизации, независимо от формы правового вида, указываются пределы вмешательства со стороны государства в этом процессе.

В ней на основе конкретных и фактических данных приводятся на уровне ныне действующих в НКР предприятий модели управления, отмечены с целью повышения эффективности их деятельности необходимость совершенствования управления.

B. V. GABRIELIAN

DEVELOPMENT TRENDS OF ORGANIZATIONAL MANAGEMENT STRUCTURES OF INDUSTRIAL ENTERPRISES IN NKR

Summary

In this work there is considered the choice features of the form of government in NKR in conditions of realization of privatization process, irrespective of forms of the legal type. There are also pointed out limits of interference on the part of state in this process.

On the base of concrete facts there are adduced management models at the level of now acting enterprises in NKR and necessity of improvement of management for the purpose of increasing their activity's efficiency.

Հայոց լեզու և գրականություն

ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

**ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԱՐՑԱՍԻԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶԱԿԱՆ ԱՐԿԵՍՏԻ¹**

Հոդվածում Արցախի բանաստեղծների խոսքարվեստի բազում իրողություններից համառոտ վերլուծված են բառապաշարային ու քերականական այնպիսի իրողություններ, որոնք առանձնակի գունագեղություն են հաղորդում նրանց ստեղծագործություններին և նպաստում չափածո կերտվածքի ժողովրդայնությանն ու բանաստեղծականությանը:

Արցախյան գրականությունը՝ հայ գրականության արժանավոր, անբաժան մի մասը, 80-90-ական թվականներին թևակոխեց զարգացման նոր շրջան: Ծնվեցին մարտական, հայրենաշունչ երգեր, որոնցում անկեղծությունը, հաղթական հատու շեշտերը, տաք անմիջականությունը ստեղծագործական հաջողության նախապայման դարձան: Ստածողության եղանակների, գիտակցության ձևերի ու արտահայտությունների նորացումը իր ազդեցությունը թողեց բանաստեղծական արվեստի լեզվի զարգացման վրա: Բառապաշարի և քերականության մեջ հետզհետե սկսեցին իրենց զգալ տալ թարմ շերտեր ու նոր երանգներ, որոնց համառոտ վերլուծությանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Արցախի բանաստեղծների ստեղծագործությունների բառապաշարի առաջին իսկ քննությունից նկատվում է, որ նրանց խոսքը համեմված է ժողովրդական լեզվամտածողությանը հատուկ տարրերով: Դրանց գործածությունն ամենից առաջ պատճառաբանված է երկի բովանդակությամբ, նյութի թելադրանքով, տվյալ միջավայրի ու տեղի համապատասխան երանգավորում ստեղծելու միտումով, ինչպես նաև հեղինակի պարզ ու անպաճույճ մտածողությամբ ու ոճի անհատականությամբ: Հաճախ, կախված նյութի բնույթից, մի ընդհանուր շղթայի մեջ իրար կողքի առատորեն օղակվում են և՛ սովորական, և՛ դարձվածային հարադրություններ, փոխաբերական ու թևավոր արտահայտություններ՝ շաղախված բանաստեղծական թարմ ու ինքնատիպ հնարանքներով: Մեր միտքը հավաստենք փաստերով.

-Փրկեա...

Ինչի՞ց...

Գորշ հորդանների անզուսպ հեղեղից,

որ համակործան գալիս է անվերջ,

տանում՝ ոչ միայն

քո արտը ծլած,

մարում ոչ միայն

թոնիրը վառած,

այլև ակունքն է քանդում քո լեզվի,

¹ Հաշվի առնելով հոդվածի ծավալը ընդգրկել ենք Արցախի ոչ բոլոր բանաստեղծներին:

մայրենի խոսքիդ կրակը մարում,
մանկան բերանից կես պատառի հետ
հայկյան հոգու նշխարը խլում,
տաճարներիդ հետ՝
հոգուդ սրբազան աշխարհը փլում:
(5, 60)

Ու մինչ մոտենար մանչը, Մաշտոցին,
Մանասի լեզվի կապը արծակվեց,
ծնկաչոք եղավ Մանասը մեկեն,
ասես կողկողաց...
(5, 76)

Վ. Դակոբյանի «Մ. Մաշտոցն Ամարասում» պոեմից քաղված այս երկու հատվածում զգում ենք ժողովրդական խոսքի հմայքը: Վերը բերված դարձվածների և ժողովրդական այլ տիպի բառածնների ամենայնպես հատուկ կողմն այն է, որ դրանք արտահայտում են մեր ժողովրդի ազգային մտածողությունը: Բերենք մեկ այլ օրինակ.

Սիրիր նրանց,
Սիրիր սրտանց,
Որ ուտքիդ տակ միշտ լինի հող,
Օջախիդ մեջ՝ չմարող պող,
Որ միշտ բարին թագավորի,
Բախտը ժպտա միշտ հողվորին:
(2, 22)

Ընդգծված միավորները իրենց գործածության հաճախականությամբ խոսքին հաղորդում են կենդանություն, հյութեղություն, համապատասխան ռիթմ և բնականություն: Դրանք ժողովրդական կենդանի խոսքի այն միջոցն են, որոնց մասին Դովի. Թումանյանը գրել է. «Ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է»²:

Ժողովրդական իմացության և լեզվական արտահայտչամիջոցների օգտագործմամբ հարստացնելով և ընդլայնելով իրենց ստեղծագործական հղմարավորությունները՝ Արցախի բանաստեղծները միաժամանակ որոշակի ներդրում են կատարում մեր լեզվի զարգացման մեջ: Նրանք, օգտվելով մեր լեզվի բառակազմական հարուստ հնարավորություններից, կազմում են նոր բառեր ու արտահայտություններ և հեղինակային նորակազմությունների շնորհիվ կարողանում ինքնատիպ ու պատկերավոր դարձնել խոսքը, տվյալ դեպքում ճշգրտորեն արտահայտել իրենց մտքերի ու զգացմունքների նրբերանգները: Արցախի բանաստեղծների նախասիրած բառակազմական հնարանքներից մեկը գոյականներից վ բայածանցով բայեր կազմելն է: Մեր գրականության մեջ հայտնի բառաստեղծական այս միջոցը մախ և առաջ կիրառվում է լեզվական նմանողության սկզբունքով:

Բերենք անվանակազմ բայերի գործածության մի քանի բնագրային օրինակներ.

Թող չկորչեն օրերի չոր խաշամի տակ,
Թող արմատվեն՝ ծիլ ու ծաղիկ տալու համար,
Թող ցորենվեն՝ միայն ոսկե հաշանի տակ,
Թե սղոլորվեն՝ ինչպես սարում արևն անմար:
(3, 68)

² Դովի. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1956 թ., էջ 167:

Մագաղաթված դեմքերին ածխագիր է օրն ասես,-
Բռուցքներում երկնքված հեմակներն են վեր հառնում
Վարդան, Վազգեն ախպերքը դուռն են ջարդում քարայրիս,
հողն Արցախա վրեժվում, որդոց շիրմին մխում է,
և լողում է հեղեղում աստվածատուր մի աշխարհ:

(5, 92)

Պատկերավոր արտահայտություններ են արմատված, ցորենված, մագաղաթված, երկնքված, վրեժվում բառերը: Այս և նման բայերում անվանական բաղադրիչի իմաստը ուղղակիորեն անցնում է բային, որով և առարկային մի տեսակ տրվում է գործողության կամ շարժման բնույթ: Վ. Հակոբյանի հայրենասիրական ստեղծագործություններում հանդիպում են նաև բայական նորակազմություններ՝ գոյական + ավոր + վել կամ գոյական + ան + ալ(ել) կաղապարով: Այսպես՝

Իմ Արցախա սուրբ աշխարհի
ճամփաները բանուկանան,
արևները՝ հանդավորվեն,
կարոտները՝ սրտավորվեն,
տղավորվեն աղջիկները,
երկինքները՝ հավքավորվեն,
լքյալները՝ երգավորվեն,
սիրավառվեն գարունները...

Արցախահայ պոեզիայում առավել մեծ չափով հեղինակային նորաբանություններ են կազմվում բառաբարդման սկզբունքով: Օրինակ՝ շանթակուտակ, որդեմա (Ս. Խ.), հուզավարար, բոլորապտուղ, քանձրաթախիծ, մերձուժուտություն, երկնաշշուռնջ, ամբողջալուր, մշտամատույց (Վ. Հ.), աստղահամ, այլուրահամ, շանթածրար, հյուրահոտ, առասպելապատ, մահահղի (Ռ. Ե.) և այլն: Հետաքրքիր են առանձնապես բարդության բաղադրիչների որևէ եզրի համաբանությամբ կազմված նորաբանությունները: Այսպես՝ արցախաբույր, արցախածույլ, արցախաթույր (Գ. Գ.), մարմնամարմանդ, մարմնամոմիկ, մարմնածոմիկ, մարմնաշողիկ, ծաղկատաճար, ծաղկաբերդիկ, ծաղկառտիկ, թոնրաշուրթիկ, թոնրաթեծ, թոնրապսակ, թոնրապողիկ (Վ. Հ.), ցավահարույց, ցավամոռաց, հանքաեռ, գալիքաեռ, արշալուսաեռ, արեգակնաեռ (Ռ. Ե.) և այլն:

Պայմանավորված թեմայով և ընդգրկած ժամանակաշրջանով՝ Արցախի բանաստեղծներն իրենց երկերում օգտագործում են նաև հնաբանություններ: Բառապաշարի այս շերտին նրանք առանձնապես դիմել են պատմական թեմայով գրված պոեմներում («Մեսրոպ Մաշտոցն Ամարասում», «Տաճարն Աստծո» (Վ. Հ.), «Խաչենաբերդ» (Հ. Բ.), «Արցախի արծիվը» (Ս. Խ.)), որոնց ծնունդը արցախյան շարժման հենց սկզբին խիստ խորիրդանշական էր:

Վերոհիշյալ պոեմների մեջ գրաբարյան լեզվական ատաղձի հմուտ օգտագործմամբ ու մշակվածությամբ առանձնանում է «Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմը, որտեղ գրաբարի քերականական ու բառապաշարային տարրերն այնպես են գործածված, որ թեպետ զգալ են տալիս հին հայերենի շունչը, բայց և ամենևին չեն կաշկանդում պատումը: V դարի բառամթերքից քաղված բառաձևերի ինքնատիպ գործառությամբ հեղինակը պոեմի հենց սկզբից ընթերցողին տեղափոխում է պատմական հեռավոր ժամանակները և լեզվական համապատասխան միջոցներով ցուցադրում դարի, տարածության ու իրադարձությունների, դրանց հորձանուտի մեջ ձևավորվող կերպարի բնական գույներն ու գծերը:

Եվ մի քայլ արավ Մեսրոպ Մարգարեն
ծաղկածոփք ու լուրթ ժամփի երկայնքով,

ու ճամփան դարձավ կենաց մայրուղի,
ու ճամփան դարձավ փանդիո յոթնաղի,
և հոգեքնձա
խոսքեր հնչեցին,
և ախորժալուր
մայրուղին իջավ՝
որպես թե Սինա լեռան փեշերից:

(5, 53)

Ահա մեկ ուրիշ հատված, որտեղ մեր առաջ կանգնում է Վարդան Մամիկոնյանն իր հոգեբանությամբ ու մտածողությամբ.

-Քիչ առաջ եղա մոտիկ շենքերում,
ես ուստրեր տեսա առյուծակորով
ու տեսա դուստրեր՝
պերճ ու նազանի,
նույն իղձը ու տենչով դեմքները վառած
դիցեր են, ասես, երկնառաք:
Եվ ամենուրեք ցավը նույնն է,
ուրեմն՝ ելքն էլ պիտի նույնը լինի:
Մեր սուրբ դպրահոր արարած գրով,
մեր դարբինների կռած սրերով
պիտի նորոգենք,
ու նորագրենք,
արդարագրենք
գիրը մեր ազնիվ ճակատին դաջված...

(5, 82)

Խոսքային հիշյալ շղթայում գործածված վաղնջական ու հնաբույր բառերը պատմական միջավայրն ու կեցությունը բնութագրող, հույզով լիցքավորված հասկացություններ են, որոնք ներուճակությամբ բացահայտում են կերպարի էությունը: Պատկերի համար հիմք ու հենարան են ծառայում ուստրը, դուստր, առյուծակորով, պերճ, նազանի, իղձը, դիցեր, դպրահայր բառերը: Այս և նման բառերն այստեղ քարացած ձևեր չեն, դրանք մարմնավորում են նոր զաղափարներ՝ հաստատելով վերապրելու իրենց իրավունքը: Բերենք մեր նախնյաց մտածելակերպն ու գրելաձևը հիշեցնող մի քանի այլ բառական միավորներ, որոնք առավել ցայտուն ու շոշափելի են բնութագրում հնօրյա հասարակական հարաբերություններն ու ազգային կենցաղը. ամա («Մահը խորթ է, բայց իղձերն են ամա», 8-21), խորան («Բառը խորան է, մաքրող և փրկող», 8-26), հավատամք («Դառնում է մի հավատամքի սաղմ», 8-24), գուռ («Մեր բարբառի գուռից ջուր է խմել Աստված», 8-23), խոլ («Եվ Բուղան կրկին հրաման տվեց խոլ պատերազմի», 4-41), խանդաղատանք («Խանդաղատանքից մեկ-երկու կաթիլ խտուտ են գալիս», 5-91) և այլն:

Արցախահայ բանաստեղծների ստեղծագործությունների ուսումնասիրությունը բացահայտում է նաև նրանց նրբանկատ վերաբերմունքը քերականական և, առանձնապես, շարահյուսական արտահայտությունների գործառության հարցում: Արցախահայ պոեզիայում հանդիպող ամենատարբեր տեսակի ու բնույթի միակազմ և երկկազմ նախադասությունները, բաղադրիչ տարրերի իմաստային-քերականական տարբեր հարաբերություններով բարդ նախադասությունները՝ անդամների ու միավորների կապակցության և շարահյուսության ամենաբազմազան դրսևորումներով, նպաստում են բանաստեղծների ոճի սեղմությանը, հակիրճությանը, ծառայում իբրև մտքի խտացման միջոցներ և իրենց հերթին նպաստում նրանց անհատականության ձևավորմանը:

Բանաստեղծների խոսքին հատուկ հմայք, ժողովրդական խոսքի հատուկ երանգ են հաղորդում կախյալ շարահարությամբ նախադասություն-

ների բազմազան կառուցվածքները: Բերենք մի քանի շարահարական բարդ նախադասություններ, որոնց կախյալ բաղադրիչները դրսևորում են քերականական տարբեր հարաբերություններ.

Զմտածես տխուր բաներ, քեզ ի՞նչ՝ հասնել-չհասնել,
Պոզնես՝ մտտիր, հանգիստդ առ, վեր կաց նորից ու գնա:
Ով էլ հարցնի քեզ քո մասին, ասա՝ վաղուց չեմ տեսել...
Խոսքով արի՝ ուշացար, վեր կաց, դեհ՝ վեր, մի մնա...
(6, 130)

Փոխեցի՞ր լեզուդ՝ արյունն է փոխվում,
Քո երակների արյունը որդան.
Երբ հայերեն չէ քո սիրտը խփում,
Փլվում է սյունը հայրենական տան:
(5, 120)

Շարահարության ոճական առանձնահատկություններից մեկն այն է, որ նման կապակցությունը միտքը դրսևորում է ոչ միայն ամփոփ ու սեղմ ձևերի մեջ և կենդանի խոսքի պես պարզ է ու վճիտ, այլ երբեմն ի հայտ է բերում իմաստային որոշ նրբերանգներ, որոնք չունեն կամ չեն կարող նույն պատկերավորությամբ արտահայտել համապատասխան շաղկապական զուգահեռները:

Դա բավականին ցայտուն է երևում վերջին հատվածում, որտեղ կախյալ նախադասությունը շարահարության շնորհիվ ստացել է հարցական հնչեռանգ և դրսևորում է մի տեսակ անուղղակի ճարտասանական հարցում՝ «փոխեցի՞ր լեզուդ», որը սակայն պատասխան չի պահանջում: Վերջինս ներուճակությամբ ըմբռնվում է իբրև պայման մեկ այլ գործողության, որը հենց արտահայտված է գլխավոր նախադասության մեջ՝ իբրև հիշյալ պայմանի հետևանք՝ «արյունն է փոխվում»: Բացի դրանից, եթե պայմանի կախյալ նախադասությունը լիներ շաղկապական, ճարտասանական ոճը պիտի փոխվեր պատմողականի, որը տվյալ դեպքում կթուլացներ հուզականությունն ու ներգործման ուժը:

Ինչպես գիտենք, շաղկապական և հարաբերական երկրորդական նախադասությունները սկսվում են համապատասխան կապակցության բառերով: Սակայն ապացուցված է, որ նախադասության միավորների դասավորությունը քարացած չէ, և ոճական նկատառումով կարելի է պատմականորեն ընդունված և օրինաչափ ձևերի կողքին օգտագործել նաև կապակցող բառերի շրջում շարահարությունը: Ոճական այս հնարանը, հօգուտ տաղաչափության, տրամաբանական շեշտի կամ իմաստային երանգների հարստության, վարպետորեն է գործածված հայ պոեզիայում: Օրինակ.

Չեղվում էլ անգամ թե խփեն մեկին,
ցավի մի ալիք ձեզ կհամակի,
պատժվողը գուցե ուրիշ է այսօր,
ծեր հերթը, անշուշտ, վաղը կհասնի:
(10, 23)

Երբեմն միևնույն նախադասության մեջ հանդիպում են միևնույն շաղկապների կամ հարաբերականի շարահարության տարբեր կիրառություններ, մեկ՝ կանոնավոր, մեկ՝ շրջուն, որն էլ բազմազանություն է մտցնում քերականական ձևերի մեջ և դրանով կանխում միապաղաղությունը:

Երբ հողն արմատի միջով չի ձգվում,
երբ չի աստղոտվում մութը երկնքով,
երբ անլուր քարը արդեն չի երգում՝
անգամ կաքավն է երբ իջնում քարին,
ուրեմն՝ ուղին ուղիղ չի գնում:
(7, 27)

Մտքի համառոտության ու սեղմության հասնելու նպատակով Արցախի բանաստեղծները գործածում են նաև զեղչված անդամներով նախադասություններ: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ զեղչված է լինում բաղադրյալ ստորոգյալի հանգույցը կամ պարզ ստորոգյալը, իսկ նրանց լրացումները մնում են: Օրինակ՝

Հորս ճակատին՝ քարափի կնճիռ,
աչքերում՝ հաստատ վճիռ կայծակի...

(9, 46)

Նկատելի է, որ զեղչված է կա և նման իմաստով որևէ ստորոգյալ, սակայն առկա է ստորոգյալի լրացումը՝ տեղի պարագան (ճակատին, աչքերում), և նախադասությունը հնչեղանգային ավարտվածությամբ ստանում է ամփոփվածություն:

Երբեմն այսպես շարադրվում են քառատողեր, նույնիսկ ամբողջական հատվածներ, որոնք դառնում են գրելու ոճ:

Իմ երազները՝ լեռների ծնունդ,
Լեռների սնունդ՝ իմ երազները,
Իմ մուրազները՝ լեռների հոգի,
Լեռների ոգի՝ իմ մուրազները:

(3, 51)

Բարդ նախադասության ոճական արժեքը բնեկիս՝ ուշադրություն է գրավում կառուցվածքային մեկ այլ բնորոշ իրողություն ևս: Ինչքան էլ մղտքերը ծավալվում են, նախադասությունները որքան էլ հարստանում են նոր անդամներով, կախյալ կամ անկախ միավորներով, միևնույն է, երբեք չի խախտվում շարադրանքի ամբողջությունը և կառուցվածքային համաչափությունը, ինչը արտահայտվում է մասերի շարահյուսորեն ճշգրիտ և կարելի է ասել՝ տվյալ դեպքի համար առավել ընդունելի տրոհումներով:

Ծառը, որ անճիգ ելնում է ահա
քո կանաչ ափից,
իմ երազներին ու քո ծեռքերին
ուղիղ զուգահեռ,
քո աղբյուրների անմահությունն է,
և արժանի է անպայման երգի,
քանզի ոգի կա սլացքում նրա,
քո ոգին պայծառ՝
փրկիչն ամենայն:

(7, 273)

Ինչպես տեսնում ենք, զեղարվեստական այս հարաբերականորեն ամբողջական կառույցի բաղադրիչների, ենթաբաղադրիչների ներդաշնակ ու ճկուն շարադասությամբ ստեղծվել են բանաստեղծության այնպիսի տողանցումներ, որոնք յուրովի տրոհելով խոսքը՝ պահպանում են ամբողջի ռիթմական միությունը:

Ամփոփելով արցախահայ բանաստեղծների հայրենասիրական ստեղծագործությունների բառապաշարի ու քերականական իրողությունների շատ համառոտ բնությունը՝ կարող ենք ընդգծել, որ նրանց խոսքարվեստը ամբողջությամբ մեջ աչքի է ընկնում լեզվական բարձր մշակույթով, զեղարվեստական խոսքի ոճավորման հարուստ ու նպատակային միջոցներով, որոնք գրական ստեղծագործության բարձր արվեստի կարևոր պայման են:

Հայոց լեզվի և գրականության ամբիոն

1. Գ. Գաբրիելյան, «Աղավառում», Բ., «Յազըչի», 1987 թ.:
2. Հ. Բեգլարյան, «Հրաշք երկիր իմ Ղարաբաղ», Երևան, «Նաիրի» հրատ., 1989 թ.:
3. Ս. Խանյան, «Արցախյան դրդանքներ», Երևանի պետ. համալսարան, 1991 թ.:
4. Ս. Խանյան, «Արցախի արժիվը», «Արցախ» հրատ., 1995 թ.:
5. Վ. Հակոբյան, «Ամարասի զանգերը», Երևան, «Արևիկ» հրատ., 1989 թ.:
6. Վ. Հակոբյան, «Տաճարն աստծո», Երևան, 1990 թ.:
7. Վ. Հակոբյան, «Մենարան», Երևանի համալսարանի հրատ., 1996 թ.:
8. Ռ. Եսայան, «Ծարաված հեռքեր», Ստեփ., «Մշակույթ» հրատ., 1991 թ.:
9. Ռ. Եսայան, «Նժար», «Արցախ» հրատ., 1995 թ.:
10. Հ. Ալեքսանյան, «Կենսադաշտ», Երևան, «Նորհրդային գրող» հրատ., 1989 թ.:

ГАЗАРЯН АСМИК

КРИТИЧЕСКИЙ ОБЗОР ЯЗЫКОВЫХ ОСОБЕННОСТЕЙ ПРОИЗВЕДЕНИЙ АРЦАХСКИХ ПОЭТОВ

Р е з ю м е

В статье из множества методов и приемов искусства художественного слова арцахских поэтов кратко проанализированы те факты лексики и грамматики, которые придают особый колорит их произведениям и обуславливают народность и метричность их поэзии.

HASMIK KHAZARYAN

THE CRITICAL SURVEY OF THE LANGUAGE PECULIARETY OF ARTSAKH POETS' WORKS

S u m m a r y

In the article of the great number of methods and ways of Artsakh poets' word art, are briefly analysed the facts of vocabulary and grammar that give a particular colouring to their poetry and simulate the nationality and the metric of their poetry.

Հայոց լեզու և գրականություն

Ա. Յ. ՍԱՐԳՍՅԱՆ (բգթ, ավագ դասախոս)
Շ. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ (բգթ, ասիստենտ-դասախոս)

ՄԻԱՅՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐՈՒՄ ՊԱՅՊԱՆՎԱԾ ԴԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՀԱՏՈՒԿ
ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՌԱԶԵՎԵՐ

Զարգացման անընդհատականությունը լեզվի անբաժանելի, մշտական և կայուն հատկանիշներից է: Խոսելով միայն դարձվածներում պահպանված բառերի ու բառաձևերի մասին, պետք է նկատի առնել, որ լեզվական համակարգը զարգանում է անհավասարաչափ: Լեզվական մի կարգի երևույթները որոշակի զարգացում են ապրում, այն դեպքում, երբ մի այլ կարգի երևույթներ մնում են անփոփոխ: Լեզվական համակարգի, այն կազմող միավորների զարգացման անհավասարաչափությունը երևան է գալիս գրական լեզվի և բարբառների համեմատության միջոցով: Դա նշանակում է, որ գրական լեզուն, տվյալ դեպքում գրական հայերենը և նրա բարբառները միանման չեն արձագանքում լեզվական նորարարությունների մտցման ու եղած ձևերի հնացման երևույթներին: Ինչպես հայտնի է, գրաբարյան պարառական (արտագոյական, շրջակայական) հոլովը, որը մի շարք քերականների կողմից ինքնուրույն հոլովաձևի բացակայության պատճառով առանձին հոլով չի դիտվում, կազմվում է զ նախդիրի և գործիական հոլովի միջոցով: Գրաբարյան պարառական հոլովաձևը պահպանվել է Ղարաբաղի բարբառում՝ *գիրաՎ* բառում (*զ + ինքն* դերանվան գործիական հոլով): Հետաքրքրականն այն է, որ *գիրաՎ* բառով կազմվող բոլոր կապակցությունները բնորոշվում են կայունության հատկանիշով, իսկ կայուն կապակցությունների գերակշռող մեծամասնությունը ունի դարձվածի արժեք՝ *գիրաՎ հընցնել* (տեսության գնալ), *գիրաՎ անել* (զբաղեցնել), *գիրաՎ ածել* (փաթաթել, ծածկել), *գիրաՎ ընգնել* (պատահական հանդիպել), *գիրաՎ օնել* (անուշադրության մատնել, արհամարհել) և այլն¹:

Այս կապակցություններում *գիրաՎ* բառը չի գիտակցվում որպես *ինքն* դերանվան պարառական հոլովաձև, այսինքն առկա է հոլովաձևի քարացած ձևով պահպանում և գործածություն, մի համգամանք, որը նպաստել է նշյալ կայուն կապակցությունների դարձվածային արժեքի ձեռք բերմանը (այստեղ, անշուշտ, վնասորոշ դեր է խաղացել կապակցությունների փոխանվանաբար կամ վերախմաստավորված ձևով գործածվելը):

Հոլովաձևի քարացում և այդ ձևով գործածություն ունենք նաև *գինք* բառում (*զ* նախդիր + *ինքն* դերանվան եզ. հայց. հոլով), որն ունի միայն որոշյալ հոգով կիրառություն: *Ձ* նախդիրով *ինքն* դերանվան հայցական հոլով-

¹ Այս կապակցություններից միայն *գիրաՎ տալ*-ն ու *գիրաՎ ընգնել*-ը ունեն նաև ուղղակի իմաստով գործածություն և համապատասխանաբար նշանակում են *փաթաթել* և *սկանա զարնվել*:

վածնի քարացման հետևանքով բարբառում ունենք նոր բառ, որը գործածվում է *Ներքին ուժ, ինքնաքտիրապետում* նշանակություններով²:

Չինք՝ բառը ևս գործածվում է միայն դարձվածներում՝ *զինք՝ը շղղըհարել* (1. ողբալ, 2. սպառնալ), *զինք՝ը հուրան պահել*, *|| ցրել տալ* (իրեն կորցնել), *զինք՝ը հրվաթել* (1. ինքն իրեն տիրապետել, 2. հարստանալ), *զինք՝ը տուրուր տալ* (նույնն է *զինք՝ը շղղըհարել*), *զինք՝ը կուրցընել* (ինքնատիրապետումը կորցնել) և այլն:

Խոսքային այլ միջավայրերում հանդես չեն գալիս նաև *աղնաղազ* անել, *անդծիղն* ընգնել, *աշ* ընգնել, *(հ)աշան* անել, *ըրամակ* ընգնել, *կակարդը* ցվլքեն պըտկեն ինիլ դարձվածների ընդգծված բաղադրիչները:

Աղնաղազ բառի բացատրությունը գտնում ենք Հր. Աճառյանի կազմած գավառական բառարանում՝ «*Աղն /աղաջ-Դրբ.* (կ'արտասանուի *ըղնըղազ*, *աղնաղազ*) քիչ քանակությամբ աղու (ցորեն), որ կ'աղան ջաղացքին մեջ առանց վճարի և առանց հերթի սպասելու: Աղուն և աղալ բառերեն բարդուած»³:

Աղնաղազ անել կապակցությունը բարբառում գործածվում է երկու նշանակությամբ՝ 1. տարվա ցորենից (նոր բերքից) այլուր անել՝ փորձելու համար և 2. մինչև ծաշը թեթևակի ուտել, ընդ որում երկու դեպքում էլ ունենք դարձվածային կիրառություն:

անդծին բառը «*մտատանջության հիվանդություն*»⁴ նշանակությամբ չի գործածվում, պահպանվել է միայն *անդծին* ընգնել դարձվածում, որն ունի *ժանր մտատանջության, խոհերի մեջ ընկնել* իմաստը:

Հր. Աճառյանը *աշ* ընգնել կապակցությանը տալիս է հետևյալ բացատրությունը՝ «Մնալով հատիկը, մորթին, իւղը, պանիրը աշ են ընկել»⁵. պատմական զարգացման հետևանքով դարձվածը կրել է իմաստային փոփոխություն, այժմ *աշ ընգնել*-ը գործածվում է *շոգել* և *հացի ծաղկելը* նշանակություններով, այսինքն նախկին իմաստը՝ *հոտելը*, մասնավորեցվել է մարդու (շոգել՝ «Մարդու հոտել») և հացի վերաբերյալ: Աշ բառը բարբառում պահպանվել է նաև *աշ տալ* դարձվածում, որը նշանակում է՝ 1. չորացրած մրգերը եռացրած ջրով անցկացնելուց հետո նորից չորացնել արևի տակ, 2. արևի տակ նստել, «արև» ընդունել:

Ըստ Հր. Աճառյանի գավառական բառարանի *(հ)աշան* բառը նշանակում է *կալսելու ցորեն*⁶: Բարբառում բացի *(հ)աշան անել* դարձվածից (1. խորձը կալում ցրել՝ կալսելու համար, 2. իրեն անկարգորեն թափել, ցրել), այլ կապակցություններում հանդես չի գալիս:

Գրական հայերենի երամակ բառի հնչյունափոխված տարբերակն ունենք *(հ)ըրամակ(ք) ընգնել* դարձվածում, որը նշանակում է *մարդամեջ դուրս գալ, հասունանալ: Ըրմակեն* բառը, որն ի տարբերություն *(հ)ըրամակ(ք)*-ի կազմում է բառերի ազատ կապակցություններ, ևս նույն ծագումն ունի:

² Ձ նախդիրի բառակազմական գործառությունը ակնհայտ է դրսևորվել ժամանակակից հայերենում, որտեղ ունենք նման կարգի բառերի հարուստ քանակ՝ գարդ, ոսկեգոծ, գառամյալ, զարթուն և այլն:

Հր. Աճառյան, Գավառական բառարան, Էմինյան ազգագրական ժողովածու հրատարակությամբ Լազարյան ճեմարանի, Թիֆլիս, 1913, էջ 78:

Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 189, 1971-1979 թթ.:

⁵ Հր. Աճառյան, Գավառական բառարան, Էմինյան ազգագրական ժողովածու հրատարակությամբ Լազարյան ճեմարանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 113:

Նույն տեղը, էջ 113:

Յր. Աճառյանը նշում է, որ կակարդ բառը գործածվում է Արաբկիրի, Պոլսի բարբառներում և *կակարչ* ձևով՝ Ակնո բարբառում և նշանակում է «բռնի, մասնավորապես աքլորի կատար»⁷: Դարաբաղի բարբառում հաճախակի գործածություն ունի *կակարդը ցեվքեն պըտկեն ինիլ* (ինքնավստահ, գոռոզ լինել) դարձվածը և դատելով նրա իմաստից՝ կարելի է եզրակացնել, որ գործ ունենք նույն բառի հետ: Այդ համոզման է բերում նաև այն հանգամանքը, որ բարբառում կան նույն կաղապարով կազմվող և նման իմաստ ունեցող այլ դարձվածներ ևս՝ *քժթը յիրժինքումը ինիլ*, *քժթը յիրժինքին կալած ինիլ* և այլն:

Այսպիսով՝ *կակարդ* բառը պահպանվել է նաև մեր բարբառում *կակարդը ցեվքեն պըտկեն ինիլ* դարձվածի միջոցով:

Յր. Աճառյանի վկայությամբ *փաթ* արմատը առանձին անգործածական է՝ «փաթ - պատատել, ծրարել, փաթաթել»: Արմատ առանձին անգործածական, որից կազմված են փաթաթել (գրված նաև փաթատել) «փաթաթել, չորս կողմով ծածկել»⁸: Մեզ թվում է, որ նույն արմատն է առկա *լիզդուն փաթըղնել* // *ընգնել* դարձվածում, որն ունի *լեզուն կապվել, կծկմալ* իմաստը:

Շէր բառը ըստ հայկազյան բառարանի նշանակում է *ծառի ոստ*⁹. *Կերան* բառի հետ համահնչունություն ստեղծելու նպատակով այն դարձել է *շերան* հետևյալ նախադասություն-դարձվածում՝ *խալիսեն աշկեն շերանը տըմնում ա, ուրան աշկեն կերանը տըմնում չի*: Բարբառում ոչ *շերը*, ոչ *շերանը* խոսքային այլ միջավայրում հանդես չեն գալիս:

Միայն դարձվածներում են պահպանվել նաև մի շարք բարդություններ, որոնց բաղադրիչները, սակայն, ինչպես դարձվածային, այնպես էլ ոչ դարձվածային կապակցություններում ազատորեն հանդես են գալիս. *յրզնըհավաք անել* (յեզնը + հըվաքել), *կուլառնը մըս* (կյուլ + առնել), *պիրանան լալաքավահիր*¹⁰ *վեր ածել* (լալ+քավահիր), *մօր ծըծվանըը վեր ածել* (ծծել բառից):

Գրաբարյան բարացած *հօքօց-հանգուցելօց* հոլովածն ունենք մեռնելու բովանդակություն արտահայտող *հօգօց-հանգուցելօց տըմնալ* դարձվածում:

Բարբառում բոլոր դեպքերում *մաքուր*, *մաքրվել* բառերի փոխարեն գործածում ենք *թանհուզ*, *թըմիզվիլ* բառերը: Միակ բարբառային արտահայտությունը, որտեղ հանդիպում ենք *մաքրվել* բային, *մաշվիլ-մաքրվիլ* դարձվածն է:

Ակն բառը գրական հայերենում առանձին գործածություն չունի և պահպանվել է միայն բարդություններում (անկնդետ, ակնակապիճ, ակնոց, ակունք): Որպես բառակապակցության բաղադրիչ հանդես է գալիս *ակ* բառը տեսողության օրգան իմաստով՝ *ակը(ն) տալ* (փնտրել, ստուգել), *ակեն կենալ* (1. կորզին մնալ, 2. մաքուր կենցաղով ապրել): Բարբառում ունենք նաև ծագումնաբանական նույն հիմքն ունեցող *ակնը* բառ, որը նշանակում է *քիչ ակունք*, նաև *ըկանել* բայը ստուգել, փնտրել իմաստով:

Ինքն դերանվան բացառական հոլովածն է (*ուրան* +անա-*ուրանան*) դարձել է *ուրանան քինիլ* (ուշաթափվել) դարձվածի բաղադ-

⁷ Նույն տեղը, էջ 540:

⁸ Յր. Աճառյան, Գայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 468, 1971-1979 թթ:

⁹ Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2, 3-րմալ. հրատ., 1981 թ:

¹⁰ Այս բարդության առանձին բաղադրիչները գործածական են միայն գրական հայերենում:

գործածվում է Արաբկիրի, Պու-
լարաբաղի բարբառում հաճա-
հ *պրտկե՛ն ինի* (ինքնավստահ,
աստից՝ կարելի է եզրակացնել,
լզման է բերում նաև այն հան-
արավ կազմվող և նման իմաստ
լճումը ինի, քճքը յիո՛ճ ինքին

է նաև մեր բարբառում *կակար-*
առը առանձին անգործածական
Արմատ առանձին անգործա-
սծ նաև փաթատել) «փաթաթել,
արմատն է առկա *լուզուն փաթ*
է կապվել, կմկմալ իմաստը:
նի նշանակում է *ծառի ոստ*⁹,
ծելու նպատակով այն դարձել է
իմուն՝ *խալխե՛ն աշկե՛ն շերանը*
նում չի։ Բարբառում ոչ *շերը*, ոչ
ս չեն գալիս:

Յլ նաև մի շարք բարդություններ,
իմաստային, այնպես էլ ոչ դարձ-
իանդես են գալիս. *լրզնրիավաթ*
իս (կյուլ + առն), *պիրանան*
մոր ծրծվանքը վեր ածել (ծծել

ուցե՛լոց հոլովածն ունենք մեռնե-
ց-հանգուցե՛լոց տը՛ննալ դարձ-

տ, մաքրվել բառերի փոխարեն
Միակ բարբառային արտահայ-
բային, *մաշվիլ-մաքրվիլ* դարձ-

ծին գործածություն չունի և պահ-
նդետ, ակնակապիճ, ակնոց, ա-
ղղիչ հանդես է գալիս *ակ* բառը՝
(փնտրել, ստուգել), *ակե՛ն կենալ*
այրել): Բարբառում ունենք նաև
սկնը բառ, որը նշանակում է *ջրի*
իմաստով:

հոլովածը (*ռւրան* + անա-
շաբափվել) դարձվածի բաղադ-

րան, հ. IV, էջ 468, 1971-1979 թթ:
ան, Նոր բառգիրք հայկազեան

գործածական են միայն գրական

րիչը և այդ ձևով գործածվում է միայն տվյալ դարձվածում¹¹:

Միայն դարձվածներում պահպանված մյուս բառերը բացատրել չկա-
րողանալու և նրանց մասին տեղեկություն չիմանալու պատճառով բավա-
րարվենք դրանք պարզապես ներկայացնելով. *կաղաղակը* ջրցիլ, *փախորը*
պեց անել, իրեսը *դըղլարու* կաշի, *յերմանիմ* անել, *դուսաղ* անել, *դըրը*
կըտրըցնել // տալ, կըլօխը *դանգ՝* անել, յեր *խըտակվել*, քարավ *քարզու*
անել, *դայուղը* կուրցընել, *բըզըբազու* կ'ալ, *բըլըբանդի* պար ածել,
դաբալը թըխել, *գյազ* անցկըցընել, *աթաթան* կըտրել, *հիդիդին* ծակեն հալ
ածել, *դարխուզ(ս)* անել- պիրիլ, *դանգիզը* քար ջրցիլ, մըթկեն *դոնը*¹²
ընգնել, սըլկըհած, *բիստի քըթած*, *դըլօթը* կերած, *մըղէլիտ(դ)* կենալ, մին
պէննու կ'ունակ չինիլ, *ցըմըքիաթ* ինիլ, *աջալը* ծըրավել, *սուրը*¹³ վեր ածել,
լու կենալ¹⁴:

A. Ю. САРГСЯН, Ш. М. МИНАСЯН

НЕКОТОРЫЕ КАРАБАХСКИЕ СЛОВА И ФОРМЫ СЛОВ,
КОТОРЫЕ СОХРАНИЛИСЬ ТОЛЬКО В ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ОБОРОТАХ

Р е з ю м е

В статье представлены те карабахские слова и формы слов, которые сохранились только в фразеологических оборотах. Некоторые из них древнеармянские слова или застывшие грамматические формы, а остальные до сих пор не этимологизированы.

A. Y. SARGISIAN, CH. M. MINASIAN

SPECIAL WORDS AND WORD-FORMATIONS MAINTAINED
ONLY IN THE PHRASES IN GHARABAGH DIALECT

S u m m a r y

In this article I represent those Gharabagh words forms of the words, which preserved only in set phrases. Some of them are old Armenian words or dead grammatical forms and the vest of them are not etymologized.

¹¹ Բարբառում ունենք նաև *ռւրան* փոխանվանաբար գործածվող ձևը՝
ռւրան իլածան կապակցության փոխարեն:

«Ղոն-կ'ըստի միայն մտքին դոնը ընկնել Ղզ. Ղրբ-խորասուղուիլ խոկմանց ու
մտածմանը մեջ» - Ղր. Աճառյան, Գավառական բառարան, Եմինյան ազգագրական
ժողովածու հրատարակությամբ Լազարյան ճեմարանի, Թիֆլիս, 1913, էջ 283:

¹² Շատ երևույթին ծագել է արտասուք բառից:

¹³ «Լու Ղրբ. միայն հետևյալ ոճերով կը գործածուի

- Լու կենալ - Ղրբ. թույլ տալ, մեկը հանգիստ թողուիլ: Լու՛ւ է կենում, որ ձեռքիս
գործը վերջացնեմ:

-Լու՛ կաց. Ղրբ. թող-հանգիստ թող. Լու կաց, ասեմ: Լու կաց՝ գնամ բերեմ», նույն
տեղը, էջ 436:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱԹԵՄԱՏԻԿԱ

Պ. Ս. Գևորգյան - Նախաշարժությունը PRO-կատեգորիայում.....	15
Ս. Կ. Պետրոսյան - Խզվող գործակցով մի եզրային խնդրի սպեկտր հետազոտումը.....	23
Դ. Ս. Դադայան - Մասնակի օրթոգոնալիզացման մեթոդը և նրա կիրառումը գծային ծրագրավորման տրանսպորտային խնդր նկատմամբ.....	29
Լ. Ռ. Աբրահամյան, Յու. Ս. Սովսիսյան - Տերմար զուգորդական գեր նույնություններ հակադարձելի հանրահաշիվներում.....	34

ՄԵԽԱՆԻԿԱ

Գ. Բ. Նալբանդյան - Մաշակայունության գնահատականը շփման գոտում դիսկ-դիսկ կցման համար.....	45
---	----

ՖԻԶԻԿԱ

Ա. Գ. Ալեքսանյան - Իջեցված չափայնությամբ համակարգերի դիպոլային մոմենտի մատրիցային տարրի մասին.....	51
Ա. Ա. Ավանեսյան, Մ. Վ. Սինասյան - Շոճանակի փոքր տատանումներ պարամետրական ուժեղացումը բաբախող մագնիսական դաշտում.....	54

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խ. Վ. Խաչանով, Ռ. Ա. Մանդալյան, Ռ. Յու. Սարգսյան - ԼԴՅ սփաթաբեր դաշտերի տարածքներում կալցիտոմետրական որոնողական մեթոդների կիրառման հնարավորության մասին.....	59
--	----

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռ. Խ. Գազինյան, Յու. Ա. Սոաքեյան, Ֆ. Ա. Գևորգյան - Արցախի բնական հուշարձանները և դրանց պաշտպանության խնդիրները.....	68
---	----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռ. Յ. Մանգասարյան - Փոքր գործարարության զարգացումը Արցախում.....	76
Բ. Վ. Գաբրիելյան - ԼԴՅ արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման կազմակերպական կառուցվածքների զարգացման իտուումները.....	81

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Ղազարյան - Քնարական ակնարկ Արցախի բանաստեղծներ ստեղծագործությունների լեզվական արվեստի.....	87
Ա. Յ. Սարգսյան, Շ. Ս. Սինասյան - Սիայն դարձվածներում պահպանված Ղարաբաղի բարբառին հատուկ բառեր ու բառաձևեր.....	94

СОДЕРЖАНИЕ

МАТЕМАТИКА

15	<i>П. С. Геворкян</i> - Предподвижность в PRO-категории.....	15
23	<i>С. К. Петросян</i> - Исследование спектра одной граничной задачи разрывным весовым коэффициентом.....	23
29	<i>Д. С. Дадаян</i> - Применение процесса частичной ортогонализации транспортной задаче линейного программирования.....	29
34	<i>Л. Р. Абрамян, Ю. М. Мовсисян</i> - Тернарные сверхтождества ассо- циативности в обратимых алгебрах.....	34

МЕХАНИКА

45	<i>Г. Б. Налбандян</i> - Оценка износостойкости в зоне трения при кон- такте типа диск-диск.....	45
----	---	----

ФИЗИКА

51	<i>Ал. Г. Алексанян</i> - О матричном элементе дипольного момента системах с пониженной размерностью.....	51
54	<i>А. С. Аванесян, М. В. Минасян</i> - Параметрическое усиление малы колебаний маятника в пульсирующем магнитном поле.....	54

ГЕОЛОГИЯ

59	<i>Х. В. Хачанов, Р. А. Мандалян, Р. Ю. Саркисян</i> - О возможности применения калцитометрических методов поисков на шпато- носных полях НКР.....	59
----	--	----

ГЕОГРАФИЯ

68	<i>Р. Х. Гагинян, Ю. А. Аракелян, Ф. С. Геворкян</i> - Природны памятники Арцаха и проблемы их охраны.....	68
----	---	----

ЭКОНОМИКА

76	<i>Р. Я. Мангасарян</i> - Развитие малого бизнеса в Арцахе.....	76
81	<i>Б. В. Габерслян</i> - Тенденции развития организационных структу- ры управления промышленными предприятиями НКР.....	81

АРМЯНСКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

87	<i>Асмик Газарян</i> - Критический обзор языковых особенностей произ- ведений арцахских поэтов.....	87
94	<i>А. Ю. Саргсян, Ш. М. Манасян</i> - Некоторые карабахские слова формы слов, которые сохранились только в фразеологическ оборотах.....	94

ԿԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. «ԱրԴՀ գիտական տեղեկագիր» պարբերականում հրատարակվում են Արցախի պետական համալսարանում կանոնաված օրիգինալ հոդվածներ, հաղորդումներ ու նամակներ տեսական և էքսպերիմենտալ բնույթի՝ մաթեմատիկայի, մեխանիկայի, բաղադրիչիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներից:
2. Ուղղումվում են նաև ԱրԴՀ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, գիտաժողովների և գիտական դպրոցների նյութեր:
3. Բնագրերը ներկայացվում են երկու օրինակով, մեքենագրված երկու ինտերվալը մեկ, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անփոփոխներով: ՄԱԿ-ից (վերևի ծախ անկյունում), հոդվածի վերնագրից և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անոտացիա: Հոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջը, հաղորդմանը՝ 4, նամակինը՝ 2:
4. Հոդվածի հետ ներկայացվում է արձանագրության քաղվածքը այն ամբիոնից, որտեղ կատարվել և քննարկվել է աշխատանքը:
5. Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (հստակ լուսանկար կամ գծագրեր՝ արված առանձին սպիտակ թղթի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է կարգային համարը: Տեքստի լուսանցքներում նշվում են նկարների և աղյուսակների տեղերը:
6. Միևնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:
7. Բերվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը քառակուսի փակագծերում [1, 2-5] ըստ հանդիպման հերթականության: Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, գրքի կամ հոդվածի վերնագիրը: Պարբերական հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումը առանց չափերտների, թվականը՝ հատորի ու թողարկման համարները, հերթական համարը և էջը: Գրքերի դեպքում՝ հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը: Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի ատենախոսությունից) գրականության մեջ նշել չի թույլատրվում: Արտասահմանյան գրականությունը տեքստում նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ՝ օրիգինալով:
8. Հոդվածի տեքստի վերջում ծախ կողմում նշվում է այն ամբիոնը կամ լաբորատորիան, որտեղ կատարվել է աշխատանքը:
9. Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале "Ученые записки" АргУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиофизики, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.
2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АргУ.
3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через два интервала на русском, армянском или английском языках, с армянским, русским или английским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе с таблицами не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.
4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.
5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертежи, выполненные черной тушью на белой бумаге). На обратной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.
6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.
7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках ([1, 2-5]). В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; на книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе-на оригинале.
8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.
9. Статья подписывается всеми авторами.